Գիտություն

ԱՊՐԻԼ
№4
(406)
2026 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «Հայաստանի գիտությունը համաշխարհային հետազոտական տարածքում. մրցունակություն, գիտական գերազանցություն և գիտական արդյունքի իրացում տնտեսության մեջ» խորագրով կլոր սեղան-քննարկում

Ապրիլի 28-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում անցկացվեց «Հայաստանի գիտությունը համաշխարհային հետազոտական տարածքում. մրցունակություն, գիտական գերազանցություն և գիտական արդյունքի իրացում տնտեսության մեջ» խորագրով կլոր սեղան-քննարկում, որին մասնակցում էր ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Ողջունելով ներկաներին՝ Նիկոլ Փաշինյանը, շնորհակալություն հայտնեց քննարկումը կազմակերպելու համար: Վարչապետն ընդգծեց նման քննարկումների կարևորությունը՝ գիտության ոլորտի զարգացմանը միտված Կառա-

վարության հետագա քաղաքականությունների մշակման գործում: «Կարծում եմ՝ ծրագրերի շուրջ քննարկումներ ունենալը, դրանք իրականացնելն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման են, որովհետև ոլորտի ընթացիկ վիճակի զարգացումների և պատկերացումների մասին պետք է լինի մտքերի պարբերական փոխանակություն»,- ասաց վարչապետը՝ հավելելով, որ դա կնպաստի նաև այդ մտքերի հղկմանը:

Երկրի ղեկավարը նշեց, որ 2017 թվականի համեմատ 2025 թվականին արդեն արձանագրված արդյունքներով գիտության ֆինանսավորումն ավելացել է շուրջ 2,8 անգամ՝ 185 տոկոսով, գիտության ոլորտում աշխատավարձերի էական բարձրացում է տեղի ունեցել, ընդհուպ մինչև 300 տոկոս:

«Առաջինը մեր մտածողությունը և լեզվամտածողությունը պետք է փոխվեն և այս առումով նաև պիտի խոստովանեմ, որ ելույթներում իմ ականջը ծակում է, երբ ասվում է, որ Կառավարությունն աջակցում է գիտությանը: Այստեղ մի տեսակ տարածություն է ստեղծվում Կառավարության և գիտության միջև: Մենք գիտությանը չենք աջակցում, գիտության զարգացումը մեր քաղաքականությունն է: Այսինքն՝ մենք չենք տեսնում, որ այստեղ կա պետություն, Կառավարություն, և ինչ-որ մի հեռավորության վրա գոյություն ունի գիտություն, որին մենք պետք է աջակցենք: Գիտության զարգացումը մեր քաղաքականությունն է, և դա ունի շատ կոնկրետ և շոշափելի պատճառ: Մենք չենք պատկերացնում պետության զարգացումն առանց գիտության զարգացման: Եվ մյուս կողմից՝ մենք չենք պատկերացնում գիտության զարգացումն առանց կրթության զարգացման: Բայց նաև ուզում եմ ասել, որ պետության զարգացում ասելով՝ առաջին հերթին նկատի ունենք տնտեսության զարգացում»,- շեշտեց երկրի ղեկավարը՝ հավելելով, որ գիտությունը և գիտական հանրությունը քաղաքականությունների մշակմանը մասնակցության ավելի մեծ ծավալ և ներկայություն պետք է ունենան:

Վարչապետի դիտարկմամբ՝ գիտությունը տնտեսություն է, որովհետև գիտության կառավարումը, գիտությանը տրվող միջոցների ճիշտ կառավարումը և գիտությունը՝ որպես տնտեսություն ընկալելը, շատ կարևոր գործիք է, որը լուծում է բազմաթիվ խնդիրներ: Գիտության զարգացումը Նիկոլ Փաշինյանը կարևորեց մեր ինքնությունը ոչ միայն պահպանելու, այլև այն ավելի զարգացնելու, ինքներս մեզ ավելի լավ ճանաչելու տրամաբանության համատեքստում:

Վարչապետի խոսքով մեր մեծագույն խնդիրներից մեկը բոլոր տեղայնացված ոլորտներն առնվազն կամրջելն է և հասկանալ, որ գործ ունենք շրջափուլի հետ, որովհետև Հայաստանի Հանրապետությունում գոյություն չունի առանձին վերցրած թաղ, գոյություն չունի առանձին վերցրած գյուղ, ինչպես նաև առանձին ոլորտ. «Մենք չենք պատկերացնում առանձին վերցրած գիտության ոլորտ, էլ չեմ ասում՝ գիտության մեջ առանձին ոլորտներ: Եվ շատ կարևոր է, որ մենք մեր ոլորտները, մեր երկիրը համախմբենք մեկ նպատակի շուրջ: Եվ այդ նպատակը Հայաստանի Հանրապետությունն է, մեր պետության զարգացումը: Բայց պետությունը, ինչպես առիթ ունեցել եմ ասելու, կիսվելու մեր պատկերացումներով, մի կողմից և՛ նպատակ է, և՛ միջոց: Նպատակ է, հենց իր գոյության փաստով, միջոց է, որովհետև պետությունը միակ գործիքն է, որը մեզ համար կապահովի լավագույն պայմաններ՝ մեր ինքնությունը պահպանելու, զարգացնելու, մեր անվտանգությունը, ազատությունը, բարեկեցությունը և երջանկությունն ապահովելու համար»:

Ամփոփելով Նիկոլ Փաշինյանը նշեց. «Իհարկե, Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է սիրի իր պետությունը, և սա շատ կարևոր և առանցքային գործոն է, բայց մյուս կողմից Հայաստանի Հանրապետությունը պետք է սիրի իր քաղաքացուն՝ բոլոր մասնագիտությունների, այդ թվում՝ գիտական գործունեությամբ զբաղվող: Եվ այն քաղաքականությունները, որոնք մենք վարում ենք, մեր սիրո արտահայտությունն է, Հայաստանի Հանրապետության սիրո արտահայտությունն է գիտությամբ զբաղվող բոլոր մարդկանց նկատմամբ»:

Ողջունելով կլոր սեղանի մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանն ասաց, որ Գիտությունների ազգային ակադեմիան Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ նախաձեռնել է քննարկումների շարք, որի գլխավոր առաքելությունն է համակարգել գիտական հանրության ակտիվ մասնակցությունը գիտության զարգացման ռազմավարական ծրագրում:

Քննարկումների շարքը նաև նպատակ ունի ձևավորելու մասնագիտական և ինստիտուցիոնալ երկխոսության հարթակ՝ ուղղված Հայաստանի գիտական համակարգի մրցունակության բարձրացմանը, գիտական գերազանցության խթանմանը, գիտության և տնտեսության միջև կապի ամրապնդմանը, գիտական արդյունքների կիրառական և տնտեսական ազդեցության բարձրացմանը, գիտության զարգացման պետական քաղաքականության և ռազմավարական առաջնահերթությունների համադրմանը:

«Այսօր մենք կանգնած ենք բարդ և պատասխանատու խնդրի առաջ: Անհրաժեշտ է անցում կատարել դեպի տեխնոլոգիական ինքնիշխանություն: Սա նշանակում է ունենալ ռազմավարական ուղղություններով ամրագրված սեփական գիտատեխնոլոգիական կարողություն և ձևավորել գիտական ներուժ, որը կարող է անմիջականորեն ծառայել պետության զարգացմանը:

Կարևորագույն խնդիր է ձևավորել մի համակարգ, որտեղ գիտությունը, կրթությունը և տնտեսությունը գործում են որպես մեկ ամբողջական շղթա»,- ասաց Աշոտ Սաղյանը:

Անդրանիկ քննարկումը նվիրված էր Գիտությունների ազգային ակադեմիայի դերակատարությանը գիտության զարգացման ռազմավարության լանդշաֆտում:

Անդրադառնալով ՀՀ կառավարության հաստատած Գիտության զարգացման ռազմավարական ծրագրին՝ Աշոտ Սաղյանն այն համարեց հաջողված: «Մեր գլխավոր խնդիրը Գիտության զարգացման ռազմավարական ծրագրի կատարմանն ուղղված իրատեսական մեխանիզմների և ուղիների մշակումն է, իսկ դա պահանջում է հանրապետությունում առկա, ինչպես նաև արտերկրյա առողջ գիտական մտքի, գիտական ուժի մոբիլիզացում, ինչի նպատակով էլ նախաձեռնվել է այս քննարկումների շարքը»,- ասաց Աշոտ Սաղյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են համակարգային և բովանդակային խորքային փոփոխություններ գիտության և բարձրագույն կրթության ոլորտում, ստեղծված են նախադրյալներ՝ շնորհիվ ՀՀ կառավարության աջակցության: «Սկսած 2022 թ.-ից գիտության պետական ֆինանսավորման ծավալները գրե-

թե եռապատկվել են, իսկ որոշ առավել կարևոր ուղղություններով ՀՀ կառավարության ներդրումներն աճել են ավելի քան 8 անգամ: Վերջին 3 տարվա ընթացքում մեր ինստիտուտները և գիտական խմբերը ՀՀ կառավարության կողմից հատկացված ֆինանսական միջոցներով համալրվել են գերժամանակակից, թանկարժեք անալիտիկ և տեխնոլոգիական սարքավորումներով»,- ասաց Աշոտ Սաղյանը: Այնուհետև ՀՀ ԳԱԱ նախագահը ներկայացրեց ակադեմիայի համակարգում գիտության ֆինանսավորման որոշ քանակական տվյալներ: Ըստ այդմ, ընդհանուր գիտության ոլորտի բազային ֆինանսավորումը, գիտական դրամաշնորհային ֆինանսավորումը, սարքավորումների ծրագրային ֆինանսավորումը և նպատակային ծրագրային ֆինանսավորումը կտրուկ աճել է 2022 թ.-ից, ավելանալով գրեթե 2.2 անգամ, և 2025 թ. կազմել է 40.2 միլիարդ դրամ:

ԳԱԱ-ի մասով ֆինանսավորման ծավալները 2020 թ.-ի համեմատ 2025 թ. ավելացել են 68%-ով և կազմել են 17.73 միլիարդ դրամ:

Անդրադառնալով տպագրված հոդվածներին՝ Աշոտ Սաղյանը նշեց, որ 2025 թ.-ին 2020 թ.-ի համեմատ SCOPUS/WOS շտեմարաններում տպագրված հոդվածների քանակը եռապատկվել է: «Սակայն այստեղ մենք խնդիրներ ունենք. մարդիկ որոշակի վճարումների դիմաց ստիպված տպագրում են հոդվածներ այնպիսի պետությունների գիտական ամսագրերում, ինչպիսիք են Իրաքը, Բրազիլիան, Մոզամբիկը, Սենեգալը, որոնց գիտական մակարդակը միանշանակ ցածր է մեր ակադեմիական ամսագրերի մակարդակից: Նպատակ ենք դրել 2027 թվականին ունենալու առնվազն երեք ա-

➤2

ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «Հայաստանի գիտությունը համաշխարհային հետազոտական տարածքում. մրցունակություն, գիտական գերազանցություն և գիտական արդյունքի իրացում տնտեսության մեջ» խորագրով կլոր սեղան-քննարկում

➢1 կադեմիական ամսագիր՝ ներառված SCOPUS/WOS համակարգում: Համոզված եմ՝ դրան կհասնենք»,- ասաց Աշոտ Սաղյանը: Նա նշեց, որ մեր կարևորագույն խնդիրներից է նաև գիտության կիրառական ճյուղի զարգացումը Հայաստանում: «Այսօր կիրառական գիտությունը խիստ կարևոր օղակ է տնտեսության և ռազմաարդյունաբերական համակարգի զարգացման համատեքստում: Այս խնդիրը ներառված է ռազմավարական ծրագրում, նախատեսվում է այն զարգացնել ստարթափ ծրագրերի ներդրմամբ: Բայց մեր կարծիքով գիտության կիրառական ուղղությունը պետք է լիարժեք դիտարկվի գիտության ընդհանուր ֆինանսավորման համատեքստում: Գիտությունների ազգային ակադեմիան ունի փորձ և կարող է իր վրա վերցնել գիտության կիրառական ծրագրերի մասնագիտական փորձաքննությունների և կատարման ընթացքի մշտադիտարկման գործառույթները»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը: Նա ներկայացրեց «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնը՝ որպես գիտական արդյունքների ապրանքայնացմամբ զբաղվող կառույց: Այստեղ սեփական հետազոտությունների արդյունքների հիման վրա կազմակերպված են մի շարք փոքրածավալ արտադրություններ, արտադրանքը հաջողությամբ իրացվում է տեղական, ռուսական և եվրոպական շուկաներում: Կիրառական նշանակության ձեռքբերումներից Աշոտ Սաղյանը նշեց նաև պատմամշակութային ժառանգության միջազգայնացմանն ու կիրառությանն ուղղված աշխատանքների արդյունքները, որոնք իրականացվել են Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից: «Տիրինկատար հնավայրի վիշապաքարերը և մշակութային լանդշաֆտն» ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ–ի համաշխարհային ժառանգության նախնական ցանկում, իսկ Արենի 1 քարայրի պեղված հատվածները վերածվել են թանգարանի, որը 2025 թ.-ին ընդունել է ավելի քան 55 հազար այցելու»,- ասաց Աշոտ Սաղյանը:

Ներկայացնելով գիտության երիտասարդացման խնդիրը՝ ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց, որ 2020թ.-ից մինչև 2022թ.-ը դիտվել է մինչև 35 տարեկան գիտնականների թվի նվազում, իսկ 2022թ.-ից այն սկսել է դինամիկ աճել: 2025թ.-ին 2022 թ.-ի համեմատ այն աճել է 16%-ով՝ հասնելով 776 երիտասարդ գիտնականի:

Աշոտ Սաղյանը խոսեց նաև գիտության հանրայնացման և հանրամատչելիացման մասին, որը Գիտությունների ազգային ակադեմիայի առաքելություններից է: «Այս ուղղությամբ մենք փոխել ենք մեր ռազմավարությունը: Դպրոցների մակարդակից որոշել ենք անցնել գիտության բարձրագույն ոլորտ և զբաղվել Հայաստանի Հանրապետությունում միջազգային գիտության նվաճումների հանրայնացման և միջազգային հարթակներում հայկական գիտության նվաճումների հանրայնացման հիմնախնդիրներով: Գիտությունների ազգային ակադեմիան շահել է Հորիզոն-Եվրոպա դրամաշնորհային ծրագիր՝ 300 հազար եվրո ֆինանսավորմամբ, որը գիտության հանրայնացման բնագավառում առաջին Հորիզոն ծրագիրն է Հայաստանի Հանրապետությունում, և այն կլինի շարունակական»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը:

Աշոտ Սաղյանը նշեց, որ, համաձայն «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հիմնական առաքելությունը պետք է լինի հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների և խմբերի գիտամեթոդական և փորձագիտական գործունեության գնահատումը: Դրա համար նախատեսվում է ակադեմիայի կազմում ձևավորել մասնագիտական 6 փորձագիտական հանձնաժողով:

Ակադեմիայի կազմում կգործեն նաև վերակազմավորված մասնագիտական պրոբլեմային խորհուրդներ, որոնց գործունեությունն ուղղված կլինի հանրապետության տարբեր գերատեսչություններում և մասնավոր սեկտորում առկա խնդիրների վերաբերյալ գիտական քննարկումների կազմակերպմանն ու մասնագիտական եզրակացությունների տրամադրմանը: Պրոբլեմային խորհուրդները սկսել են գործել դեռևս 2023 թ.-ից:

ՀՀ ԳԱԱ նախագահը խոսեց նաև կազմակերպչական հարցերի մասին: «Հուսով եմ՝ մայիսին կունենանք ՀՀ կառավարության որոշումը Գիտությունների ազգային ակադեմիայի մասով և հաստատված կանոնադրությունը: Համաձայն «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի՝ երկու ամսվա ընթացքում պետք է անցկացնենք ակադեմիայի ասոցացված անդամների ընտրություններ, ինչը կհամալրի Գիտությունների ազգային ակադեմիան բարձրակարգ գիտնականներով: Օրենքով 100 թիվն է հաստատված ակադեմիայի անդամության համար, և այսօր ունենք 35 թափուր տեղ: Ընտրություններից հետո նոր համալրված կազմով ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը կընտրի նախագահության 8 անդամ: Նախագահության ընդհանուր կազմը 11 հոգի է, որից 2-ին առաջարկում է լիազոր մարմինը, իսկ նախագահության ղեկավարը օրենքով հանրապետության նախագահն է: Այնուհետև նախագահությունը 1 ամսվա ընթացքում պետք է ընտրի ակադեմիայի նախագահ: Նորընտիր ՀՀ ԳԱԱ նախագահը մեկ ամսվա ընթացքում ՀՀ ԳԱԱ նախագահության հաստատմանը կներկայացնի ակադեմիայի նոր կառուցվածքն ու հաստիքացուցակը»,- ասաց Աշոտ Սաղյանը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ-ում կայացավ «Հայկական համադպրոցական գիտության փառատոն 2026» ամենամյա մրցույթի եզրափակիչ փուլը

Ս/թ. մարտի 28-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության շենքում անցկացվեց «Հայկական համադպրոցական գիտության փառատոն» ամենամյա մրցույթի եզրափակիչ փուլը: Երևանի և ՀՀ մարզերի 40 պետական և ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների միջին և ավագ դասարանների 140 սան ներկայացրին իրենց նորարարական հետազոտական նախագծերը հետևյալ 5 անվանակարգերում՝

«Մաթեմատիկա և ծրագրավորում» (14 նախագիծ), «Ֆիզիկա և աստղագիտություն» (10 նախագիծ), «Քիմիա» (18 նախագիծ), «Կենսաբանություն» (18 նախագիծ), «Հասարակական գիտություններ» (18 նախագիծ):

Աշակերտների նախագծերը վերաբերում էին արհեստական բանականության կիրառության եղանակներին, փրկարարական աշխատանքներին մասնակցող ռոբոտների նախագծմանը, տեսողության խնդիր ունեցող անձանց օգնող տեխնոլոգիական ակնոցների մշակմանը, բնապահպանական խնդիրներին (խելացի բիոպլաստիկ և մեղվափեթակ, խոսող և սնունդ փրկող փաթեթ, բնության պահպանության մուլտֆիլմեր, նիտրատներ և ծանր մետաղներ հայտնաբերելու հատուկ սենսորներ և այլն), հասարակագիտական ուսումնասիրություններին (քաղաքի և մարզի տեսարժան վայրերի թվային քարտեզագրման և գրավչության բարձրացում, ժամանակակից դիզայնում Մարաշի ասեղնագործության կիրառում և այլն):

Նախագծերին ծանոթացան Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, ԿԳՄՍՆ և Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ներկայացուցիչներ:

«Շատ ոգևորիչ է տեսնել, թե ինչ բազմազան ու հետաքրքիր գաղափարներ ունեն մեր երեխաներն ամենատարբեր բնագավառներում: Սա շատ լավ միջավայր և ձևաչափ է, որպեսզի մենք այդ գաղափարները տեսանելի դարձնենք: Հուսով եմ, որ տարեցտարի այս փառատոնին մասնակցությունը մեր դպրոցներում ավելի ու ավելի կխրախուսի գիտության հանդեպ հետաքրքրությունը: Շատ կարևորում եմ, որ մենք այս աշխատանքն անում ենք ԳԱԱ-ի հետ, որովհետև ԳԱԱ-ն մեր այն կառույցն է, որը գիտության հանրայնացման, դպրոցների հետ աշխատանքի շատ մեծ դեր ունի»,- ասաց Ժաննա Անդրեասյանը:

Այս տարի ներկայացվել է շուրջ 100 նախագիծ, որոնցից 78-ն անցել է եզրափակիչ փուլ: Նախագծերը ներկայացվում են ինչպես անհատական, այնպես էլ խմբային ձևաչափով: Յուրաքանչյուր անվանակարգում լինելու է երեք հաղթող: Մրցանակաբաշխությունը կանցկացվի 2026 թվականի մայիսին: Նախատեսված է, որ մրցույթի հաղթողները կմասնակցեն Եվրոպական միությունում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում կայանալիք միջազգային գիտական փառատոներին (Արիզոնա նահանգի Ֆինիքս քաղաքում կայանալիք ԱՄՆ «Regeneron» միջազգային գիտական և ճարտարագիտական տոնավաճառ, Գերմանիայի Քիլ քաղաքում կայանալիք ԵՄ երիտասարդ գիտնականների EUCYS մրցույթ):

«Հայկական համադպրոցական գիտության փառատոնը» անցկացվում է 2021 թվականից: Փառատոնի նպատակն է աշակերտների շրջանում գիտական հետազոտությունների նկատմամբ հետաքրքրության սերմանումը, խմբային աշխատանքի, հետազոտական նախագծերի իրականացման և դրանք ներկայացնելու հմտությունների զարգացումը: Այս տարվանից այն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կողմից՝ ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

«Վիկտոր Համբարձումյանը և իր գերդաստանը» խորագրով միջոցառումը

«Ազգային գրադարանային շաբաթվա» շրջանակում 2026 թ. ապրիլի 13-ին Հիմնարար գիտական գրադարանում տեղի ունեցավ աշխարհահռչակ աստղագետ Վիկտոր Համբարձումյանի հոր՝ գրականագետ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համազասպ Համբարձումյանի վերանորոգված հուշասենյակի բացման արարողությունը: Հուշասենյակը վերանորոգվել է «Մարտին Սթար» ընկերության աջակցությամբ:

1965 թ.՝ Համազասպ Համբարձումյանի մահից հետո, կինը՝ Հռիփսիմե Համբարձումյանը, ամուսնու անձնական գրադարանը նվիրել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի գրադարանին, որի հիման վրա կազմավորվել է գրադարանի առաջին անհատական հավաքածուն: 1968 թ. գրադարանում բացվել է նոր սրահ՝ «Պրոֆեսոր Համազասպ Ասատուրի Համբարձումյանի գրադարանային ֆոնդ» վերտառությամբ: Համբարձումյան ընտանիքի առաջարկով Հիմնարար գիտական գրադարանին է տրվել նաև գիտնականի աշխատասենյակի գույքը: Այժմ հուշասենյակը նորովի կհյուրընկալի այցելուներին:

Հուշասենյակի բացման արարողությանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, ՀՀ ԳԱԱ բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարներ, Վիկտոր Համբարձումյանի թոռնուհին՝ Աննա Համբարձումյանը, գիտական և կրթական հաստատությունների ներկայացուցիչներ:

Հուշասենյակի բացմանը հաջորդեց «Վիկտոր Համբարձումյանը և իր գերդաստանը» խորագրով միջոցառումը: Ելույթներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, Հիմնարար գիտական գրադարանի տնօրեն Մայա Գրիգորյանը, Վիկտոր Համբարձումյանի թոռնուհի Աննա Համբարձումյանը, Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը:

Այնուհետև Հիմնարար գիտական գրադարանի անունից Մայա Գրիգորյանը շնորհավորեց Բյուրականի աստղադիտարանի 80-ամյա հոբելյանը. «Բյուրականի աստղադիտարանը ոչ միայն գիտություն է ստեղծում, այլև դաստիարակում է մտածող անհատի: Այսօր, նշելով աստղադիտարանի հիմնադրման 80-ամյակը, արժևորում ենք ոչ միայն անցած ուղին, այլև այն անգնահատելի ներդրումը, որը Բյուրականի աստղադիտարանն ունեցել է և ունի հայկական գիտության զարգացման, միջազգային հեղինակության բարձրացման ու գիտական ժառանգության պահպանման գործում: Այն մնում է գիտության լուսավոր օջախներից մեկը, որտեղ գիտելիքը մշտապես նորոգվում է, ընդլայնվում և փոխանցվում ապագային: Շնորհավորում ենք Բյուրականի աստղադիտարանի հիմնադրման 80-ամյակի առթիվ»:

Մայա Գրիգորյանը Հիմնարար գիտական գրադարանի կողմից խորհրդանշական հուշանվեր հանձնեց Բյուրականի աստղադիտարանի տնօրենին:

Ցուցադրվեց տեսանյութ Վիկտոր Համբարձումյանի գործունեության մասին:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Վաստակաշատ արևելագետը

(Ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)



Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, հասարակական գործիչ Ռուբեն Արամի Սաֆրաստյանը 70 տարեկան է: Վաստակաշատ գիտնականն արժանի տեղ է զբաղեցնում հայաստանյան արևելագիտական դպրոցի ճանաչված անունների շարքում ոչ միայն իբրև այդ դպրոցի ավանդույթների շարունակող, այլև Հայաստանում արևելագիտության, մասնավորապես թուրքագիտության զարգացման գործում ունեցած իր անուրանալի ներդրման համար: Ռ. Սաֆրաստյանն անցել է գիտական-ստեղծագործական բովանդակալից ուղի, որը շաղկապված է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական հարուստ գործունեությանը:

Ռուբեն Սաֆրաստյանը ծնվել է 1955 թ. հոկտեմբերի 5-ին Երևան քաղաքում՝ հայտնի թուրքագետ-արևելագետ և քաղաքական գործիչ Արամ Սաֆրաստյանի ընտանիքում: Շարունակելով ընտանեկան ավանդույթը՝ նա ևս ընտրում է արևելագետի մասնագիտությունը: 1977 թ. ավարտում է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության բաժինը, այնուհետև 1980 թ.՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան: 1981 թ. աշխատանքի է անցնում Գիտությունների ակադեմիայի համակարգում, նախ՝ որպես Արևելագիտության ինստիտուտի կրտսեր, ապա՝ ավագ, առաջատար գիտաշխատող: 1998 թվականից ղեկավարել է ինստիտուտի Թուրքիայի բաժինը: 2006–2020 թթ. եղել է Արևելագիտության ինստիտուտի տնօրեն. այժմ ինստիտուտի տնօրենի խորհրդականն է:

Գիտական գործունեությանը զուգահեռ Ռ. Սաֆրաստյանը 1988–1991 թթ. աշխատել է նաև որպես Գիտությունների ակադեմիայի Սփյուռքի և Հայոց ցեղասպանության ուսումնասիրման գիտական կենտրոնի փոխտնօրեն:

1983 թ. Ռ. Սաֆրաստյանին շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի, 2009-ին՝ դոկտորի գիտական աստիճան, իսկ 2007 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 2010 թ. անվանի արևելագետն ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2014 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Ռ. Սաֆրաստյանը 1999–2002 թթ. հաջորդաբար հաղթող է ճանաչվել Հումբոլդտի (Գերմանիա), ապա Ֆուլբրայթի անվան (ԱՄՆ), այնուհետև Կենտրոնական եվրոպական համալսարանի (Հունգարիա) միջազգային գիտական մրցույթներում և մեկական տարի տևողությամբ հաջորդաբար գիտահետազոտական աշխատանք կատարել, նախ՝ Բոխում քաղաքի համալսարանում, ապա՝ Կալիֆոռնիայի Բըրքլի համալսարանում, այնուհետև Բուդապեշտի համալսարանի քաղաքականության ուսումնասիրման կենտրոնում: Նրա արտերկրյա գիտական գործուղումների շարքն ընդգրկում է երկու տասնյակից ավելի երկրներ:

Գիտնական-արևելագետը Հայաստանում և արտերկրում հրատարակվող մի շարք հեղինակավոր գիտական պարբերականների խմբագրական խորհուրդների, ինչպես նաև գիտական կենտրոնների խորհուրդների անդամ է:

Ռ. Սաֆրաստյանի գիտական հետաքրքրությունների ոլորտում են Թուրքիայի նոր ու նորագույն պատմության, արտաքին քաղաքականության, աշխարհաքաղաքականության, ինչպես նաև Հայոց ցեղասպանության հիմնահարցերը: Նա հեղինակ է ավելի քան երկու հարյուր հրապարակումների, որոնք լույս են տեսել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, պորտուգալերեն, թուրքերեն և այլ լեզուներով: Համահեղինակ է բուհական և դպրոցական դասագրքերի:

Վաստակաշատ թուրքագետի՝ տասնամյակների տքնաջան գիտական պրպտումների համապարփակ արդյունքն է «Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.)» մենագրությունը (2009), որը լույս է ընծայվել նաև անգլերեն ու ֆրանսերեն: 2025թ. Մոսկվայում ռուսերեն լույս տեսավ այդ մենագրության վերամշակված հրատարակությունը:

Ռ.Սաֆրաստյանի գիտական կարևոր աշխատություններից է նաև «Մուսթաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.)» գիրքը (2019): Նրա գիտական աշխատությունները լայն արձագանք են գտել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:

Ավելի քան չորս տասնամյակ է, ինչ Ռ. Սաֆրաստյանն ակտիվ գիտամանկավարժական գործունեություն է ծավալում Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում: 2015–2020թթ. ղեկավարել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը:

Ռ. Սաֆրաստյանն ունի նաև պետական կառավարման բարձրագույն մարմիններում միջազգայնագետ-վերլուծաբանի, ինչպես նաև դիվանագիտական աշխատանքի փորձառություն. 1991-1992 թթ. եղել է Հայաստանի Գերագույն խորհրդի միջազգային հարաբերությունների գծով ավագ փորձագետ, 1992-1996 թթ.՝ ՀՀ Նախագահի աշխատակազմի վերլուծական բաժնի վարիչի տեղակալ: 1996-1997 թթ. կատարել է դիվանագիտական աշխատանք. Գերմանիայում եղել է ՀՀ դեսպանատան խորհրդական: Մասնակցել է մի շարք կարևոր բանակցային գործընթացների: Նա դասախոսություններով պարբերաբար հանդես է գալիս ՀՀ ԱԳ նախարարության դիվանագիտական դպրոցի ունկնդիրների առջև:

Ռ. Սաֆրաստյանը 2009-2018 թթ. և 2025 թվականից ՀՀ Հանրային խորհրդի անդամ է: Որպես փորձագետ՝ ակտիվորեն արձագանքում է միջազգային հարաբերություններին և աշխարհաքաղաքական գործընթացներին՝ հաճախակի հանդես գալով վերլուծություններով ինչպես հայաստանյան, այնպես էլ արտերկրի ԶԼՄ-ներում:

Գիտահասարակական բեղուն գործունեության համար Ռ. Սաֆրաստյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» (2008 թ.) և Պաշտպանության նախարարության «Գարեգին Նժդեհ» (2010 թ.) մեդալներով, ՀՀ Ազգային ժողովի պատվոգրով: 2021 թ. արժանացել է Պաշտպանության նախարարության պատվոգրի՝ «Արցախի Հանրապետությունում ծավալված պատերազմական գործողությունների ընթացքում Պաշտպանության նախարարությանը ցուցաբերած աջակցության համար»: Ֆրանսիական «Le dictionnaire biographique: Armռniens d'hier et d'aujourd'hui» հրատարակությունը 2021 թ. նրան ընդգրկել է պատմության ականավոր 3200 հայերի ցանկի մեջ:

Բազմաշնորհ գիտնական, խորաթափանց հետազոտող, գիտամանկավարժական ու պետական-վարչական աշխատանքի տարիների ծանրակշիռ փորձառություն ունեցող ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանին մաղթում ենք արևշատություն, կյանքի երկար տարիներ, անձնական հաջողություններ և ստեղծագործական նորանոր ձեռքբերումներ:

Աշոտ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

«Հայ-ֆրանսիական մշակութային կապերի պատմությունից» միջազգային առաջին գիտաժողովը

Հայաստանում Ֆրանկոֆոնիայի երկամսյակի շրջանակներում ս/թ. ապրիլի 17-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում կայացավ «Հայ-ֆրանսիական մշակութային կապերի պատմությունից» միջազգային առաջին գիտաժողովը, որը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Աննա Ասատրյանը: Նա նշեց, որ Հայաստանում 2027 թվականին անցկացվելիք Ֆրանկոֆոնիայի 10-րդ միջազգային մարզամշակութային խաղերին առաջին անգամ միանում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը: «Հայ ժողովրդի և այլ ժողովուրդների հետ ունեցած մշակութային առնչությունների ուսումնասիրությունը տասնամյակներ շարունակ գտնվել է Արվեստի ինստիտուտի գիտական հետազոտությունների առանցքում: Դա նաև հայագիտության կարևոր ուղղություններից է: Այս համատեքստում շատ կարևոր է հայ-ֆրանսիական մշակութային առնչությունների ուսումնասիրությունը»,- ասաց Աննա Ասատրյանը:

Նա նշեց, որ գիտաժողովը լինելու է ամենամյա և գումարվելու է յուրաքանչյուր տարվա ապրիլ ամսին: Յուրաքանչյուր գիտաժողով ունենալու է իր պատվավոր հյուրը: Այս գիտաժողովի պատվավոր հյուրը ՀՀ ազգային հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ Հովհաննես Չեքիջյանն էր: «Մաեստրոն իր գործունեությամբ հայ-ֆրանսիական երաժշտական առնչությունների լեգենդար խորհրդանիշ է: Մեզ համար միանգամից պարզ էր, թե ով պետք է լինի անդրանիկ գիտաժողովի պատվավոր հյուրը՝ մի մարդ, ով կրթվելով Ֆրանսիայում, ձևավորվելով ֆրանսիական երաժշտական միջավայրում, հետագայում իր ստեղծագործական ողջ կատարողական գործունեության ընթացքում պրոպագանդել է ֆրանսիական վոկալ սիմֆոնիկ երաժշտությունը»,- ասաց Աննա Ասատրյանը:



Գիտաժողովի մասնակիցներին իր ողջույնի խոսքը հղեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը: «Հայ-ֆրանսիական մշակութային կապերը դարերի պատմություն ունեն, և այսօր էլ այդ կապերն ինտենսիվ զարգանում են: Առաջին հայը Ֆրանսիայում հայտնվել է դեռևս 591 թվականին: 1855 թվականին Ֆրանսիայում լույս տեսավ առաջին հայերեն պարբերականը՝ «Արևելքը»: Ընդհանուր առմամբ, մինչ այսօր Ֆրանսիայում հրապարակված հայերեն պարբերականների թիվն անցնում է 215-ից:

Ի սկզբանե հայ-ֆրանսիական մշակութային կապերը կրել են անհատական բնույթ: Ֆրանսիայում են սովորել և ստեղծագործել շատ հայ անվանի գործիչներ՝ Գրիգոր Զոհրապ, Սիամանթո, Ստեփան Աղաջանյան, Հակոբ Գյուրջյան և այլոք: Իսկ երբ մենք ունեցանք պետականություն, այդ մշակութային կապերը սկսեցին կրել արդեն միջպետական բնույթ: 1949 թ. ստեղծվել է Ֆրանսահայ մշակութային միությունը, որը մինչ օրս ակտիվ գործում է: Որպեսզի մշակութային կապերը տարբեր երկրների, տարբեր ժողովուրդների հետ ամուր լինեն, և մենք հաղորդակցվենք և մասնակից դառնանք համաշխարհային մշակույթի զարգացմանը, պետք է ձգտենք ամրապնդել մեր պետականությունը, իսկ մշակույթը պետականության կարևոր գործիքներից է»,- ասաց Յուրի Սուվարյանը:

Գիտաժողովի ընթացքում զեկուցումներով հանդես եկան վաստակաշատ գիտնականներ ու երիտասարդ հետազոտողներ Լիբանանից, Հայաստանից, Չինաստանից, Ֆրանսիայից: Նրանց գիտական զեկուցումները նվիրված էին հայ-ֆրանսիական առնչություններին երաժշտության, ճարտարապետության մեջ, կերպարվեստում և թատրոնում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Հայոց ապագամարտի նվիրյալ գործիչը

(Գարեգին Նժդեհի ծննդյան 140-ամյակի առթիվ)



Գարեգին Նժդեհը (Գարեգին Եղիշեի Տեր-Հարությունյան) հայ ազատագրական պայքարի ամենավառ անհատականություններից է: Կյանքն ամբողջովին և անմնացորդ ազգին նվիրած փայլուն զորավարը, քաղաքական-հասարակական գործիչն ու մեծագույն մտավորականն անջնջելի հետք է թողել հայոց պատմության մեջ:

Գ. Նժդեհը ծնվել է 1886 թ. հունվարի 1-ին (որոշ տվյալներով՝ փետրվարի 2-ին) Նախիջևանի գավառի Կզնուտ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է Նախիջևան քաղաքի ռուսական դպրոցում, ապա ուսումը շարունակել է Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, որտեղ սովորելու ընթացքում էլ 17 տարեկան հասակից միացել է հայ ազատագրական շարժմանը: Այնուհետև մեկնել է Սանկտ Պետերբուրգ և երկու տարի տեղի համալսարանի իրավաբանական բաժնում սովորելով՝ թողել է ուսումը և ամբողջովին նվիրվել հայ հեղափոխության գործին: 1906 թ. մեկնել է Բուլղարիա, որտեղ Ռոստոմի աջակցությամբ և մակեդոնական ազատագրական շարժման ղեկավարների միջնորդությամբ ընդունվել է Սոֆիայի սպայական դպրոց և այն հաջողությամբ ավարտելով՝ 1907 թ. վերադարձել է Հայաստան:

«Նժդեհ» ծածկանվան առաջին հիշատակումը գտնում ենք մակեդոնական հայդուկի զգեստով 1906 թ. նրա լուսանկարի ընծայագրում՝ ուղղված ընկերոջը՝ Երվանդ Ղուկասյանին: «Նժդեհ» նշանակում է պանդուխտ, օտարական, տարաշխարհիկ:

1907-1908 թթ. մտել է Հայ հեղափոխական դաշնակցության շարքերը և իբրև կուսակցական նշանավոր գործիչ Սամսոն Թադևոսյանի օգնական՝ մասնակցել է պարսկական հեղափոխական շարժմանը: Զենք և ռազմամթերք տեղափոխելու համար Նժդեհը վերադառնում է Կովկաս և ձերբակալվում ցարական իշխանությունների կողմից: 93 մեղադրյալներ, որոնց թվում նաև Գարեգին Նժդեհը, ՀՅԴ-ին անդամակցության հարցում իրենց վերագրվող արարքների ապացուցված չլինելու պատճառով, անմեղ ճանաչվեցին և դատարանի կողմից արդարացվեցին:

Նոր ձերբակալության վտանգից խուսափելով՝ նա շտապում է իր համար երկրորդ հայրենիք դարձած Բուլղարիա, որտեղից էլ սկսվում է նրա գործունեության կարևոր շրջանը՝ Բալկանյան 1-ին պատերազմ, 1-ին աշխարհամարտի հայ կամավորական շարժում, 1918 թ. Ղարաքիլիսայի հերոսամարտ, Զանգեզուրի՝ 1919-1921 թթ. փառավոր հերոսամարտ, Սփյուռքում ծավալած Ցեղակրոն շարժում, 2-րդ աշխարհամարտի տարիների հայապաշտպան և հայափրկիչ գործունեություն, ազգին ու սերունդներին թողած արժեքավոր տեսական ժառանգություն...

Ահա նրա դժվարին ճանապարհի հանգրվաններից մի քանիսը, որոնք համբավ, մեծ փառք և անմահություն բերեցին նրան՝ բարձրացնելով ու արժանի դարձնելով իր պաշտելի, վեհ ու գեղատեսիլ Խուստուփին, որի լանջերին այսօր ամփոփված են նրա մասունքները: Բուլղարիայում 1912 թ. սեպտեմբերի 23-ին բազմաթիվ հայերի հետ Նժդեհն ու Անդրանիկն անդամագրվում են Բուլղարիայի կամավորական բանակին: Բուլղարական բանակի ենթասպա Նժդեհն ու Անդրանիկը հոկտեմբերի 2-ին կազմում են Հայկական կամավորական վաշտը: 1912 թ. հոկտեմբերի 20-ին Նժդեհը նշանակվում է Հայկական կամավորական վաշտի հրամանատար (վաշտի ղեկավար՝ Անդրանիկ) և մինչև 1913 թ. մայիսի 23-ը մասնակցում Բալկանյան պատերազմին: Այդ պատերազմում Նժդեհը վիրավորվում է: Հայկական վաշտն աչքի ընկավ մի շարք հաղթական կռիվներով և 1913 թ. զորացրվեց՝ հրաժարվելով մասնակցել բալկանյան ժողովուրդների ներքին կռիվներին՝ Բալկանյան 2-րդ թուրքանպաստ պատերազմին:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին, «ներման» արժանանալով ցարական կառավարության կողմից, Նժդեհը վերադառնում է Կովկաս՝ Թուրքիայի դեմ մղվելիք պատերազմին մասնակցելու պայմանով: Կռիվների սկզբնական շրջանում եղել է հայկական կամավորական երկրորդ գնդի փոխհրամանատարը, վերջին շրջանում ղեկավարել է հայեզիդական առանձին մի զորամաս: 1917 թ. սակավաթիվ ուժերով օգնության է հասել Կողբին և փրկել տեղի հայությանը կոտորածից: 1918 թ. գարնանը վարել է Ալաջայի կռիվները, որոնցով կարելիություն է ընձեռնվել նահանջող հայկական զորամասերին՝ անկորուստ անցնելու Ալեքսանդրապոլ, միաժամանակ իր մարդկանցով ապահովել է Ն. Մառի պեղումների արդյունքը հանդիսացող արժեքավոր հնությունների փոխադրումը Անիից:

Մոտենում էր 1918 թ. մայիսը, վճռվում էր հայոց ճակատագիրը: Ալեքսանդրապոլում կռվի բռնվելով թուրքական զորքերի դեմ՝ Նժդեհն իր խմբով նահանջում է դեպի Ղարաքիլիսա: Այստեղ էին նահանջել խուճապի մատնված բազմահազար հայ փախստականներ, տեղի ժողովուրդը նույնպես տագնապի մեջ էր: Ահա այս օրհասական պահին, երբ տիրում էր համատարած հուսալքում, լսվում է Նժդեհի ռազմաշունչ, ամենափրկիչ ձայնը. եկեղեցու բակում նրա արտասանած ճառը հոգեփոխեց հուսալքված, բայց ոգեշունչ խոսքի կարոտ հայերին և նրանց առաջնորդեց դեպի սրբազան ճակատամարտ: Ղարաքիլիսայի եռօրյա հերոսականով հայությունը հաստատեց իր հարատևելու կամքը, և այդ հավաքական կամքի զորացման գործում, անշուշտ, անուրանալի է Նժդեհի դերը: Ղարաքիլիսայում վարած կռիվների համար Նժդեհն արժանացել է ամենաբարձր քաջության շքանշանի:

Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո՝ 1918 թ. վերջին, Նժդեհը ՀՀ կառավարության կողմից նշանակվում է Նախիջևանի գավառապետ, իսկ 1919 թ. օգոստոսից՝ Կապանի, Արևիքի և Գողթանի ընդհանուր հրամանատար:

Այստեղ հարկ ենք համարում ընդհանուր գծերով անդրադառնալու Զանգեզուրի լեռներում 1919-1921 թթ. Նժդեհի վարած հերոսամարտերին, որոնք նրա կյանքի և հայոց նորագույն պատմության ամենափառավոր էջերից են: Առանց դրսի օժանդակության, ապավինած հայրենի լեռներին ու սեփական ոգու զորությանը, Սյունիքի հայությունը Նժդեհի ղեկավարությամբ վարեց իր հաղթական դյուցազնամարտը: Լեռնահայության դիմումներին որևէ կերպ օգնելու, ՀՀ կառավարությունը, բացի մեկումեջ արվող քաջալերանքի կամ համակրանքի խոսքերից, ոչ մի կերպ չարձագանքեց:

Բացահայտելով թուրք-բոլշևիկյան միացյալ դավադրությունը և չընդունելով ՀՀ կառավարության կրավորական կեցվածքը, որը Մոսկվայի ներկայացուցիչ Լեգրանի հետ կնքած համաձայնագրով փաստորեն Զանգեզուրը Ադրբեջանին հանձնելու նախաքայլ էր արել, Սյունիքը շարունակեց կռիվը և Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1920 թ. դեկտեմբերի 25-ին, իրեն հռչակեց ինքնավար:

Նույնիսկ Փետրվարյան ապստամբության պարտությունը և դրա հետևանքով 12 հազար գաղթականության (որից՝ 4 հազարը զորք) նահանջը, որ զգալիորեն ազդեցին լեռնահայության բարոյահոգեբանական վիճակի վրա, չընկճեցին Սյունիքը, և նա շարունակեց իր հաղթական կռիվները: Ապրիլին հռչակվեց Լեռնահայաստանի Հանրապետություն՝ սպարապետ Նժդեհի վարչապետությամբ:

Հունիսի 1-ին Զանգեզուր անցած ՀՀ կառավարության նախաձեռնությամբ Լեռնահայաստանը հայտարարվեց Հայաստան՝ Ս. Վրացյանին նշանակելով վարչապետ, Նժդեհը մնում էր իբրև սպարապետ:

Խուսափելու համար ավելորդ հալածանքներից, որին կարող էր ենթարկվել Խորհրդային Հայաստանի հայությունը և հաշվի առնելով, որ Հայաստանի բոլշևիկյան ղեկավարությունը, հանձին Ալ. Մյասնիկյանի, 1921 թ. հունիսի հռչակագրով Սյունիքը համարում էր կցված մայր երկրին, հուլիսին Լեռնահայաստանը տեղի տվեց խորհրդայնացման առաջ: Թողնելով Զանգեզուրը՝ Նժդեհը հրաժեշտից առաջ հավաստեց լեռնահայությանը, որ ինքը ընդմիշտ չի հեռանում և պիտի վերադառնա, եթե Երևանի փոխարեն Բաքուն լինի Սյունիքի տերը:

Երկու տարվա կռիվների ընթացքում թշնամու 15 հազար սպանվածի դիմաց Սյունիքը տվեց ընդամենը մի քանի տասնյակ զոհ, իսկ մոտ 200 գյուղեր մաքրագործվեցին թուրքերից ու վերադարձվեցին հայերին:

Շնորհիվ Լեռնահայաստանի հերոսամարտի՝ հնարավոր եղավ փրկել լեռնահայությանը կոտորածից, Սյունիքը կցել մայր հայրենիքին՝ մահացու անդամահատումից զերծ պահելով Հայաստանը հոգեբանորեն ու ռազմագիտորեն հնարավոր դարձնել Փետրվարյան ապստամբությունը և ապահովել հայ մտավորականության և մարտական ուժերի նահանջն ու անցումը Պարսկաստան:

Եվ այս ամենը հիմնականում շնորհիվ Նժդեհի անհատականության:

Ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի ծննդյան 100-ամյակի առթիվ

Ապրիլի 6-ին լրացավ հայագիտության և հայ արևելագիտության անվիճելի առաջատարներից մեկի՝ ականավոր գիտնական, ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հիմնադիր տնօրեն Գագիկ Խորենի Սարգսյանի ծննդյան 100-ամյակը:

Գ. Սարգսյանը որպես գիտնական ձևավորվեց Խորհրդային Միության ամենահեղինակավոր գիտական կենտրոնում՝ Սանկտ Պետերբուրգի համալսարանում, սակայն իր ողջ գիտակից կյանքը նվիրեց հայ արևելագիտության զարգացմանը:

1971թ. նա նշանակվեց Գիտությունների ակադեմիայի նորաստեղծ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ում օրոք ինստիտուտը համալրվեց նոր, խոստումնալից կադրերով: Նրա տնօրինության ժամանակ ինստիտուտում ձևավորվեցին այնպիսի գիտական ուղղություններ, որոնք երկար տարիներ ծառայեցին և այսօր էլ ծառայում են հայաստանյան հումանիտար ոլորտին, ինչպես նաև մեր պետությանը: Գ. Սարգսյանը 1988-1990 թթ. զբաղեցրել է ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահի, իսկ 1994-1998 թթ.՝ ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնները:

Ականավոր արևելագետ-հայագետ ակադեմիկոս Գագիկ Սարգսյանը այն բազմագիտակարգ գիտնականներից էր, ում ուսումնասիրությունները չէին սահմանափակվում մասնավոր խնդիրներով: Փայլուն կրթությունը, անձնական որակները, լայն մտահորիզոնը և լայնախոհությունն այն հատկանիշներն էին, որոնց շնորհիվ ժամանակի ընթացքում հայագիտության ոլորտում նա դարձավ անվերապահ հեղինակություն:

Գագիկ Սարգսյանը հայ արևելագիտության առաջատար ներկայացուցիչներից էր, ում գիտական գործունեությունը համադրում էր խոր տեսական մոտեցումն ու լայն համաշխարհային դիտանկյունը՝ նպաստելով հայագիտության միջազգայնացմանը և Հայաստանում ինքնուրույն արևելագիտական դպրոցի ձևավորմանը: Նա բազմաթիվ մենագրությունների և հարյուրավոր գիտական հոդվածների հեղինակ է, ինչպես նաև ղեկավարել է ասպիրանտների պատրաստումը՝ ձևավորելով բարձրակարգ հայագետների և արևելագետների նոր սերունդ: Նրա նախաձեռնությամբ ստեղծվել են նոր գիտական ուղղություններ և կադրային հզոր բազա, որի շնորհիվ հայաստանյան արևելագիտությունը դուրս է եկել միջազգային ասպարեզ:

Արևելագիտության ինստիտուտը խոր ակնածանքով է պահպանում իր երախտավորների հիշատակը:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ակադեմիական նոր հրատարակություններ

1. Կ. Թոխատյան - Հայաստանի ժայռապատկերները:
2. Ա. Արևշատյան - Ստեփաննոս Սյունեցին շարականագիր. անձը և գործը:
3. «Լեզու և լեզվաբանություն», 2025 թ., N 2:
4. Մ. Աբուսէֆյան - Կա՛նգ առ, ժամանակ... (Բանաստեղծություններ և գրական վերլուծություններ):
5. Г. Карагезян - От легенды к роману. Армянские сюжеты в европейской средневековой литературной традиции.
6. Դ. Գասպարյան — Եղիշե Չարենցի գրական-քաղաքական աղերսները:
7. М. Рухкян - Арам Хачатурян в диалоге со временем.
8. Հեղ. խումբ - Բնագիտությունը, մաթեմատիկան, տեխնիկան, ինֆորմատիկան XXI դարում. հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ (Համահայկական VIII գիտաժողովի նյութերի ժողովածու):
9. «Պատմաբանասիրական հանդես», 2026 թ., N 1:
10. «Լրաբեր հասարակական գիտությունների», 2026 թ., N 1:
11. «Գիտության աշխարհում», 2026 թ., N 1:

Հայոց ազատամարտի նվիրյալ գործիչը

1921 թ. հուլիսին Նժդեհը թողնում է Զանգեզուրը և անցնում Թավրիզ: Այստեղ մոտ չորս ամիս գաղտնի ապրելուց հետո Նժդեհը մեկնում է Բուլղարիա և հաստատվում Սոֆիայում: Այստեղ նա 1922-1944 թթ. զբաղվել է քաղաքական, հասարակական և ազգային գործունեությամբ, եղել է ՀՅԴ Բալկանյան կոմիտեի անդամ:

Բացի իր ազգային, հասարակական-քաղաքական գործունեությունից, Նժդեհը 1920–30-ական թթ. Սփյուռքում հրատարակում է բազմաթիվ աշխատություններ, հոդվածներ, որտեղ հանգամանորեն վերլուծում է ոչ միայն Զանգեզուրում իր տարած հաղթանակների պատճառները, այլև ազգային գաղափարախոսության առանցքային շատ հիմնահարցեր, որոնց ընդհանրացված արդյունքն էին նրա կողմից Սփյուռքում հիմնադրված Ցեղակրոն շարժումն ու Տարոնականությունը՝ իբրև հայրենապաշտության և ցեղի ոգու արթնացման և քարոզչության գաղափարախոսություն:

1926 թ. Նժդեհը սկսում է հանդես գալ Սոֆիայում լույս տեսնող «Արաքս» դաշնակցական թերթում, որտեղ տպագրվում է նրա «Բաց նամակներ հայ մտավորականությանը» շարքը (այն 1929-ին Բեյրութում լույս է տեսնում առանձին գրքույկով):

1932 թ. Սոֆիայում լույս տեսավ նրա հերթական գրքույկը՝ «Ցեղի ոգու շարժը» վերնագրով, որում (ինչպես նաև «Խռովք» ամսագրում նույն թվին լույս տեսած «Ցեղակրոնությունն իբրև հաղթանակի զորույթ» հոդվածում) նախանշվեց հայկական ցեղային շարժումը:

1933 թ. Փարիզում կայացավ ՀՅԴ 12-րդ Ընդհանուր ժողովը, որին Նժդեհը մասնակցում էր իբրև պատգամավոր Բուլղարիայից: Նա ժողովում բարձրացրեց և անցկացնել տվեց երեք հիմնական հարց. ա) ձգտել, որ գաղութահայությունը դառնա զինական գործոն Հայաստանի ինքնապաշտպանության գործում, բ) կազմակերպել հայ երիտասարդությունն ապակուսակցական հողի վրա, գ) բոլոր ուժերը կենտրոնացնել հակաթուրքական ճակատում:

Այդ պատճառով 1933 թ. ամռանը Նժդեհը մեկնեց ԱՄՆ: Մինչև Նժդեհի ԱՄՆ գալը, այնտեղ գործում էին մի շարք երիտասարդական միություններ, որոնց համախմբելու և մեկ հայտարարի բերելու դժվարին գործը ստանձնեց Նժդեհը՝ ստեղծելով Ցեղակրոն Ուխտերը: Շարժման գաղափարախոսության վերաբերյալ 1933 թ. վերջին Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում նա հանդես է գալիս ամերիկահայ նորահաս սերնդին ուղղված «Ցեղային արթնություն» խորագիրը կրող հոդվածաշարով:

Ցեղակրոն շարժումը զգալի հաջողություններ ունեցավ ԱՄՆ-ում, իսկ Նժդեհը 1934 թ. աշնանը վերադարձավ Սոֆիա և այստեղ 1935 թ. ամուսնացավ Եփիմե Սուքիասյանի հետ: 1935 թ. նա լույս ընծայեց «Ամերիկահայությունը. Ցեղը և իր տականքը» աշխատությունը՝ միաժամանակ նպատակ ունենալով ընդլայնել Ցեղակրոն շարժումը և այն դարձնել համագաղութային:

1938 թ. աշխարհի քսան երկրներում իր աջակիցների հետ միասին Գ. Նժդեհը հիմնեց ժամանակակից ոգուն առավելագույնս բավարարող, ավելի քան 2500 անդամ ունեցող հայկական համաշխարհային կազմակերպություն՝ «Տարոնականություն», որը հայոց ազգային գաղափարախոսության ինքնապաշտպանական կառույց հանդիսացող «Ուխտ Մամիկոնէիցի» արդիացրած ու էլ ավելի զորացրած վերականգնումն էր:

Գարեգին Նժդեհն իր զինակիցների հետ ծրագրել էր 1939 թ. հրավիրել գաղափարակիցների համահայկական հիմնադիր համագումար, որը Երկրորդ աշխարհամարտի բռնկվելու պատճառով հնարավոր չեղավ իրագործել:

Պատերազմի հենց սկզբից Գերմանիայում հակահայկական ալիք բարձրացավ, գերմանական շատ թերթեր արդարացնում էին 1915 թ. հայերի կոտորածը, նացիստական մարդաբանական գիտությունը հայերին ներկայացնում էր «առաջավորասիական» (ոչ արիական) ժողովուրդների շարքում և ուներ խիստ բացասական կարծիք հայերի մասին:

Այս իրավիճակում 1942 թ. Նժդեհը մեկնում է Բեռլին: Այստեղ նա հանդիպում է նացիստական կուսակցության ներկայացուցչի հետ և իր անհանգստությունը հայտնում գերմանացիների կողմից տարվող հակահայկական քարոզչության համար: Առաջնորդվելով «գերմանական գայլին կուշտ պահելու և հայ գառնուկին փրկելու» քաղաքական սկզբունքով՝ Նժդեհը վերջինիս հետ պայմանավորվում է Բուլղարիայում հավաքագրել հայերի մի խումբ՝ Բեռլինում վարժվելու և Գերմանիայի կողմից Թուրքիայի դեմ հնարավոր պատերազմում օգտագործելու համար:

Այսպիսով, Նժդեհի համագործակցությունը նացիստների հետ եղել է գաղթաշխարհի հայությանը գերմանական սպառնալիքից փրկելու մտահոգությամբ և հակաթուրքական հողի վրա: Բեռլինում եղած ժամանակ գերմանացիների միջնորդությամբ հանդիպել է Դրոյին՝ նացիստների հետ համագործակցության ձևի և համատեղ գործելու խնդիրների շուրջ առաջ եկած հակասությունները հարթելու համար: Սակայն Նժդեհի և Դրոյի միջև հաշտեցում չկայացավ:

1944 թ. սեպտեմբերին խորհրդային զորքերը մտան Բուլղարիա: «Գիտեմ, թե ինչ է սպասվում ինձ, գրել է Նժդեհը, բայց և այնպես որոշել եմ մնալ, հակառակ որ կարելիություն ունեմ օդանավով ինձ նետելու Վիեննա: Չեմ հեռանում, որ հալածանքի չենթարկվեն մեր կազմակերպությունները: Մնալու ավելի լուրջ պատճառներ ունեմ... Այսօր կյանքին ես կապված եմ այն չափով միայն, ինչ չափով, որ ինձ դեռ պարտական եմ զգում ծառայելու Հայաստանին»,- գրում էր Նժդեհը 1944-ի սեպտեմբերին՝ ձերբակալությունից քիչ առաջ:

1944 թ. հոկտեմբերի վերջերին խորհրդային հակահետախուզության աշխատակիցների կողմից Նժդեհը ձերբակալվում է: Նրան տեղափոխում են Բուխարեստ, այնտեղից՝ ինքնաթիռով Մոսկվա և բանտարկում Լյուբյանկայում: Նժդեհը հույս ուներ, թե խորհրդային իշխանությունները իրեն՝ որպես հայ ազգայնականի, կօգտագործեն Թուրքիայի դեմ: Դրա համար, անշուշտ, իրական հիմքեր կային: Նա ենթադրում էր, որ Թուրքիան կդառնա թիրախ Խորհրդային Միության համար: 1945 թ. խորհրդային բանակն իրոք պատրաստվում էր մտնել Թուրքիա, ինչը հնարավոր կդարձներ ազատագրել Արևմտյան Հայաստանը ու այն կցել Խորհրդային Հայաստանին:

Փաստորեն Արևմտահայաստանի ազատագրության համար Նժդեհն իր քառասունամյա հակաթուրքական պայքարի փորձն էր առաջարկում խորհրդային իշխանություններին: Սակայն միջազգային քաղաքական կյանքում իրադարձությունների հետագա փոփոխություններն ի նպաստ Թուրքիայի չարդարացրին Նժդեհի հույսերը. խորհրդային բանակը չշարժվեց Թուրքիայի վրա:

1948 թ. նոյեմբերին Նժդեհին Մոսկվայից ուղարկում են Երևան, որտեղ դատաքննությունն ավարտվում է, և Նժդեհը դատապարտվում է 25 տարվա բանտարկության:

1948-52 թթ. Նժդեհը եղել է Վլադիմիրի բանտում, այնուհետև, մինչև 1953 թ. ամառը՝ Երևանի բանտում: Ուշագրավ է այն իրողությունը, որ Երևանում Նժդեհի գտնվելու ընթացքում հայ չեկիստները նրան հնարավորություն են ընձեռում քաղաքում շրջելու: Կարելի է պատկերացնել, թե 1918-1920 թթ. Երևանը տեսած Նժդեհի վրա ինչ տպավորություն կարող էր թողնել Թամանյանի նախագծով վերակառուցվող տուֆակերտ քաղաքը: Խիստ հուզիչ է այն փաստը, որ մեծ զորավարը, մոնումենտի բարձունքից նայելով մայրաքաղաքին, լուռ արտասվել է, ապա մի բուռ հող է հավաքել թաշկինակի մեջ և պահել ծոցում:

1953 թ. աշնանը Գարեգին Նժդեհը տեղափոխվում է Վլադիմիրի բանտ, որտեղ իր մահկանացուն է կնքում 1955 թ. դեկտեմբերի 21-ին: Սակայն, ինչպես ամեն մի իրական հերոս, Նժդեհը չմոռացվեց:

1992 թ. մարտի 30-ին նորանկախ Հայաստանի դատախազությունը վերանայեց Գարեգին Նժդեհի գործը և նրան հետմահու արդարացրեց: Եզրակացության մեջ մասնավորապես նշվում է. «Առաջադրված մեղադրանքներում Նժդեհը՝ նույն ինքը Գարեգին Եղիշեի Տեր-Հարությունյանը, իրեն մեղավոր չի ճանաչել՝ պատասխանելով, որ ինքը հանցագործություններ չի կատարել, այլ ամբողջ իր կյանքը նվիրել է հայ ժողովրդի ազատագրմանը»:

Այսպիսով, իր մահից ավելի քան 35 տարի անց Գարեգին Նժդեհն արդարացվեց, ինչը լոկ ձևական գործողություն էր մեծ հայի, զորավարի և մտավորականի նկատմամբ, քանի որ նրա ողջ կյանքն ու գործունեությունը որևէ արդարացման կարիք չունեն: 1983 թ. Նժդեհի աճյունը Վլադիմիրից տեղափոխվում է Երևան: Նույն տարում աճյունից մի նշխար ամփոփվում է Խուստուփ լեռան լանջին՝ Կոզնի կոչված աղբյուրի մոտ, իսկ հիմնական աճյունը ցինկի արկղի մեջ մի քանի տարի պահելուց հետո՝ 1987 թ., հանգրվանում է Գլաձորի Սպիտակավոր վանքի բակում:

Այսօր էլ Գ. Նժդեհի պատգամները խիստ արդիական են, հատկապես «մարդկային գործերի մեջ հայրենիքի պաշտպանությունն է ամենասրբազանը»:

Գարեգին Նժդեհը մեր ժողովրդի միասնականության, ազգային արժեքների շուրջ համախմբվելու, հզոր ու բարգավաճ Հայրենիք կերտելու խորհրդանիշն է:

Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ,
պ.գ.դ., պրոֆեսոր

Հայաստանի ժայռապատկերներին նվիրված արժեքավոր աշխատություն



Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Կարեն Թումաթյանի հեղինակային «Հայաստանի ժայռապատկերները» մենագրությունը: Այն ամփոփում է Հայաստանի ժայռապատկերների հայտնաբերման և ուսումնասիրության շուրջ 140-ամյա պատմությունը: Մենագրության շնորհանդեսը տեղի ունեցավ վերջերս՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում:

Աշխատության նպատակն է հանգամանալի հետազոտությամբ ու հիմնական տեսակետների քննությամբ լուսաբանել ասպարեզում առկա բարդ հարցերը, բացահայտել ժայռափորագրման ոլորտի ձևավորման նախադրյալները, զարգացման փուլերը և օրինաչափությունները, ժայռապատկերաբանության գիտաճյուղում առաջադրել նոր խնդիրներ, առաջարկել եղանակներ ու կիրառելի լուծումներ: Հեղինակը համակողմանիորեն վերլուծել է ժայռարվեստում և հայոց մշակույթի հարակից ոլորտներում պահպանված հնագույն պատկերացումները:

Այս աշխատությունը Կարեն Թումաթյանի շուրջ 40 տարվա ուսումնասիրությունների արդյունքն է: Հեղինակը նշում է՝ ժայռապատկերները պատմամշակութային իրականության բացահայտման հավաստի սկզբնաղբյուր են և ունեն գիտաճանաչողական մեծ նշանակություն. «Հայաստանում հնուց ի վեր ծագած ժայռագրությունը, հարատևելով որպես հաղորդակցության միջոց, ապահովել է սերունդների կապը, կենսափորձի, մտածելակերպի և մշակույթի անխզելիությունը, ուրույն պատկերագրությամբ փոխանցել անցյալի խորհուրդը»:

Գրքի փաստագրական հիմքում 5 բնույթի սկզբնաղբյուրներ են.

* Հայաստանի Հանրապետությունում, Արցախում, Նախիջևանում ցարդ հայտնի 85 հնավայրերից 80-ում հետազոտված գրեթե 6000 ժայռապատկեր, մոտ 100 տնտեսական, պաշտպանական, ծիսապաշտամունքային կառույց և 12 հնաստղագիտական կառուցվածք.
* Հրատարակված ժայռապատկերներ
* Հնագիտական գտածոներ ու հուշարձաններ
* Լեզվական, բանահյուսական և ազգագրական նյութեր
* Անտիկ ու միջնադարյան հայ իմաստասերների և մատենագիրների երկեր:

Կարեն Թումաթյանը ժայռապատկերները հիմնականում ուսումնասիրել է տեղում: Աշխատության մեջ դիտարկվել է Հայաստանում արդեն հայտնաբերված և 1986-2025 թթ. իր գրանցած՝ լուսանկարած ու ճշգրիտ տեղորոշած շուրջ 6000 նոր գտնված ժայռապատկեր. Գեղամա լեռներում՝ 3500, Արագածում՝ 1000, Թեքսարում՝ 750, Սյունիքի ու Քարվաճառի լեռներում՝ 500, և մոտ 250 ժայռապատկեր ու վերապրուկ՝ հարթավայրային ցածրադիր մասերում:

Քննության են առնվել գրեթե 90 բնակելի, պաշտպանական, ծիսապաշտամունքային, ոռոգման և երկնադիտական կառուցվածք, քարակոթող, որսադարան, քարհանք և այլ միավորներ: Հնագիտական ու ճարտարապետական, լեզվական ու մատենագրական, հնաստղագիտական ու տոմարական, բանահյուսական ու ազգագրական նոր նյութերի ներառման, արդիական մոտեցումների կիրառման շնորհիվ մի շարք էական աղերսներ են բացահայտվել ժայռարվեստի և պատմամշակութային մյուս ոլորտների միջև, մեկնաբանվել դրանց իմաստաբանական ու ծագումնաբանական կապերը և ձևավորման նախադրյալները:

Մշակվել և գիտական շրջանառության մեջ են դրվել ժայռապատկերի բացարձակ թվագրման աստղագիտական եղանակներ: Առաջինի օգնությամբ հասակագրվել է 10 աստղաքարտեզ (4600 ° 200 տարի):

Համեմատական նյութի ներառմամբ ցույց են տրված ժայռապատկերների և հայ մշակույթի հարակից ոլորտների իմաստաբանական աղերսները, որոնցով վկայվում են դրանց արարողների էթնոմշակութային միասնականությունը և հայ ժողովրդի՝ իր բնօրրանում հարակայությունը:

Տիեզերաբանական բովանդակության ժայռապատկերների և հնաստղագիտական կառուցվածքների վերլուծությամբ լուսաբանված են կոթողների թվագրման և օրացույցի սկզբնավորման հիմնահարցեր:

Ժայռապատկերները դիտարկված են հնադարյան պաշտամունքի, արվեստի և գիտության ձևավորման խնդիրների ծիրում՝ ներառյալ միջնադարյան հայ իմաստասիրական մտքի նվաճումները: Աշխատության մեջ սահմանված են «Ժայռապատկերաբանություն» գիտաճյուղի հիմունքները:

Գիրքը նախատեսված է պատմագիտության, հնագիտության և ազգագրության, աստղագիտության և տոմարի, գրի, բնական գիտությունների պատմության, ինչպես և այլ ոլորտների մասնագետների և հնագույն մշակույթով հետաքրքրվողների համար:

«Հայաստանի ժայռապատկերները» գիրքը հրատարակվել է ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության մակնիշով՝ Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի օժանդակությամբ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային
կապերի բաժին

Մոռացության մատնված նշանավոր հայ ավիակոնստրուկտորներ*

Ելիզավետա ՇԱՀԽԱԹՈՒՆԻ

Հայրենական մեծ պատերազմից հետո ԽՍՀՄ-ը տաղանդավոր ավիակոնստրուկտորների պակաս չուներ, բայց կին ավիակոնստրուկտորներ դեռևս չկային: Եվ ահա խորհրդային ավիաշինության մեջ հայտնվում է Ելիզավետան՝ ավիացիայի «Պողպատե կինը», ով

Ե. Շահխաթունին ամուսնու հետ

պետք է դառնար իր ժամանակների առաջին և միակ կին ավիակոնստրուկտորը: Ի դեպ, նա իր ողջ կյանքը նվիրելու էր ոչ միայն ավիացիային, այլև խորհրդային հռչակավոր ավիակոնստրուկտոր Օլեգ Անտոնովին՝ հետագայում ամուսնանալով նրա հետ:

Ելիզավետա Շահխաթունին ծնվել է 1911 թ. դեկտեմբերի 20-ին ՀՅԴ կուսակցության հայտնի գործիչ Ավետիս Շահխաթունյանի ընտանիքում: Երկու տարի Երևանի պետական համալսարանի ինժեներական ֆակուլտետում սովորելուց հետո՝ 1930 թ., նա մեկնեց Մոսկվա: Այնտեղ ընդունվեց Մոսկվայի ավիացիոն ինստիտուտ և փայլուն գիտելիքների շնորհիվ միանգամից փոխադրվեց երկրորդ կուրս:

Երիտասարդ Ելիզավետան 1935 թ. արդեն աշխատում էր ավիաարդյունաբերության ոլորտում: Իլյուշինի անվան ինքնաթիռների գործարանում նա սպառազինության և սարքավորումների մասնագետ էր: Այդտեղ մի քանի տարի աշխատելուց հետո Շահխաթունին հիմնեց օդային տրանսպորտի ամրության հաշվարկների առաջին դպրոցը ԽՍՀՄ-ում: Նա մշակեց թեստային համակարգ, որը թույլ էր տալիս 100 տոկոս ճշգրտությամբ ստուգել և ի հայտ բերել ռազմական ինքնաթիռների տեխնիկական թերությունները: Պատերազմի տարիներին նրա անմիջական մասնակցությամբ և նախագծերով են ստեղծվել նաև ռուսական «ՅԱԿ» մակնիշի ինքնաթիռները:

Շահխաթունին աշխատում էր դեսանտային սավառնակների ստեղծման վրա, այնուհետև՝ քարշիչային կրկնաթև սավառնակների («տանկի թևեր»), որոնք նախատեսված էին զրահապատ մեքենաների օդային տեղափոխման համար:

1941 թ. սկզբին տաղանդավոր հայ կնոջն իր մոտ աշխատանքի հրավիրեց հայտնի ավիակոնստրուկտոր Օլեգ Անտոնովը: Մի քանի ամիս միասին աշխատելուց հետո նրանք ամուսնացան: Հետագայում Անտոնովի ղեկավարած կոնստրուկտորական բյուրոն տեղափոխվեց Կիև, որտեղ կազմակերպվեց ռազմատրանսպորտային և ուղևորատար ինքնաթիռների արտադրություն: Տեխնիկական գիտությունների դոկտոր, Կիևի քաղավիացիայի ինժեներների ինստիտուտի պրոֆեսոր Ելիզավետա Շահխաթունին այդ ինքնաթիռների ամրության և անվտանգության պատասխանատուն էր:

Խորհրդային ավիացիայի «Պողպատե կինը» նախագծել է նաև «ԱՆ» մակնիշի ինքնաթիռները: Նրա ղեկավարած կոլեկտիվի գլխավոր հաջողությունը՝ ԱՆ-22 «Անթեյը», ուներ ավելի քան 250 տոննա քաշ և կարող էր օդ բարձրացնել մինչև 80 տոննա բեռ: Հետագայում այդ ինքնաթիռով սահմանվեց 41 համաշխարհային ռեկորդ, այդ թվում՝ առավելագույն բեռնատարողության ռեկորդը: Այդ ինքնաթիռի ստեղծման համար Շահխաթունին 1962 թ.արժանացավ Լենինյան մրցանակի: Նա պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշաններով:

Ելիզավետա Շահխաթունին մահացել է 100 տարեկան հասակում՝ 2011 թ. հոկտեմբերի 28-ին: Նրա հոգեհանգստի արարողությունը հայկական ծիսակարգով տեղի է ունեցել Կիևի հայկական ժամատանը, և նրա վերջին ցանկությամբ աճյունն ամփոփվել է Հայաստանից բերված մի բուռ հողով:

Օ. Անտոնով, Ե. Շահխաթունի, Յու. Գագարին

Գեորգի ՆՈՐԱՏՅԱՆ

Խորհրդային ավիաշինության պատմության մեջ անջնջելի հետք թողած մեր մյուս հայրենակիցը անվանի ավիակոնստրուկտոր Գեորգի Նորատյանն է,



ում ծննդյան 100-ամյակը լրանում է այս տարի՝ մայիսին:

ԽՍՀՄ-ում ավիաշինության ոլորտը զարգանում էր երեք տարբեր ուղղություններով՝ տիեզերական, ռազմական և քաղաքացիական, և այդ զարգացման գործում հայ ինժեներների դերն անգնահատելի էր: Օդային և ռազմատիեզերական ավիացիայի կայացման գործում փայլեցին Արամ Ռաֆայելյանցը, Արտեմ Միկոյանը, Ելիզավետա Շահխաթունին, Տիգրան Մելքումյանը, Կոնստանտին Խաչատրյանը, իսկ քաղաքացիական ավիացիայի շարժիչաշինության մեջ՝ տաղանդավոր հայ ինժեներ Գեորգի Նորատյանը:

Նորատյանը ծնվել է 1926 թ. մայիսի 31-ին Մոսկվայում՝ Կորյուն և Թամար Նորատյանների ընտանիքում: Կորյունի հայրը՝ Համազասպ Նորատյանը, եղել է Կարսի վերջին հայ քաղաքագլուխը:

Հայրենական մեծ պատերազմի թեժ տարիներին՝ Ստալինգրադի ճակատամարտից հետո, տասնյոթամյա Գեորգին ընդունվում է Մոսկվայի ավիացիոն ինստիտուտ: Նախադիպլոմային աշխատանքին պատրաստվելու նպատակով ուսման վերջին տարում նրան գործուղում են Իլյուշինի կոնստրուկտորական հատուկ բյուրոյում կես դրույքով աշխատելու: Ուսումը գերազանց ավարտելուց հետո Գեորգին մշտական աշխատանքի է անցնում Իլյուշինի ԿԲ-ում:

Երիտասարդ հայ ինժեների ստացած առաջին հանձնարարությունը ԻԼ-14 օդանավի շասսիի նախագծումն էր, որը Նորատյանն իրականացրեց անթերի: ԻԼ-18 ուղևորատար օդանավի նախագծումից հետո նա դառնում է Իլյուշինի հատուկ ԿԲ-ի առաջատար կոնստրուկտորը: Հաջորդիվ Նորատյանը նախագծում է ԻԼ-54 ռեակտիվ ռմբակոծիչը: 1962 թ. նա նշանակվում է ինքնաթիռների կառավարման, մեքենայացման և նախագծման խմբի ղեկավար: Նրա ղեկավարությամբ է նախագծվում միջմայրցամաքային թռիչքների համար նախատեսված ԻԼ-62 օդանավը, որի փորձարկումներն անում էր հենց ինքը: Այն մինչև օրս համարվում է աշխարհի ամենաապահով ինքնաթիռներից մեկը: Այնուհետև Նորատյանին նշանակում են թիվ 3 կոնստրուկտորական բյուրոյի գլխավոր կոնստրուկտոր, և հենց նույն ԿԲ-ում հայ ինժեները նախագծում է ռուսական ավիացիայի պարծանք համարվող ԻԼ-86 ինքնաթիռը:

ԻԼ-62 և ԻԼ-86 ինքնաթիռների նախագծման համար Նորատյանը 1971 թ. արժանանում է ԽՍՀՄ Պետական, իսկ 1981 թ.՝ Լենինյան մրցանակների: Նորատյանը 17 գյուտերի հեղինակ է: Նրա առավել հայտնի գյուտերից են ինքնաթիռի շասսիի առջևի անիվների պտույտն արգելակող մեխանիզմը, հրդեհի վտանգի մասին նախազգուշացնող սարքը, օժանդակ էներգաբլոկն ու շարժիչի կառավարման համակարգը:

ԽՍՀՄ բարձրագույն պետական մրցանակների արժանացած, Աշխատանքային կարմիր դրոշի և «Պատվո նշանի» կրկնակի շքանշանակիր, «ԻԼ» մակնիշի նոր սերնդի ռազմական և ուղևորատար ինքնաթիռների անվանի կոնստրուկտոր Գեորգի Նորատյանը մահացել է 1993 թ. հունիսի 30-ին Մոսկվայում:

*Խմբ. կողմից - նյութերը վերցրել ենք Էդուարդ Մանվելյանի «Մայրամուտի և լուսաբացի միջև. հայի ֆենոմենը», «Կորսված ժառանգություն» գրքերից (Եր., 2023 թ.):

ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցան Հայաստանում և հարակից երկրներում պետականության, ինքնության և էթնոքաղաքական գործընթացների վերաբերյալ միջազգային աշխատաժողովներ

Ս/թ. ապրիլի 22-ին «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի և Լեհաստանի Սեդլցեի համալսարանի նախաձեռնությամբ անցկացվեցին «Պետականությունը և նրա ձևերը Հայաստանում ու հարակից երկրներում» և «Ինքնություն, պետականաշինություն, միֆաստեղծում. էթնոքաղաքական գործընթացների վայրիվերումները Հարավային Կովկասում 20-րդ դարում» աշխատաժողովները:

Աշխատաժողովների մասնակիցներին ողջունեց «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը: Նա նշեց, որ քննարկման համար ընտրված են կարևոր թեմաներ, որոնք անդրադառնում են մեր ինքնությանը, պետականաշինությանը և Հարավային Կովկասում էթնոքաղաքական գործընթացների վայրիվերումներին:

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն Արմեն Սարգսյանը, ողջունելով մասնակիցներին, շեշտեց միջազգային ակադեմիական երկխոսության և համագործակցության կարևորությունը: «Այս հանդիպումը միավորել է առաջատար մասնագետներին՝ քննարկելու հիմնարար հարցեր՝ կապված պետականության զարգացման, պատմական վերափոխման, ինչպես նաև ինքնության և միֆաստեղծման

ձևավորման բարդ դինամիկայի հետ: Այս թեմաները մեծ նշանակություն ունեն՝ ժամանակակից տարածաշրջանային և գլոբալ մարտահրավերները հասկանալու համար»,- ասաց Արմեն Սարգսյանը:

Լեհաստանի Սեդլցեի համալսարանի դոկտոր Կատարժինա Մակսիմիուկը, շնորհակալություն հայտնելով հայ գործընկերներին, կարևորեց գիտական շարունակական համագործակցության անհրաժեշտությունը:

Նոր համագործակցության առաջարկով հանդես եկավ նաև Վրաստանի Իլիայի համալսարանի Գեորգի Ծերեթելիի անվան արևելագիտության ինստիտուտի տնօրեն Գեորգի Սանիկիձեն: Նա նշեց, որ այդ համագործակցության արդյունքները կարող են նշանակալի ազդեցություն ունենալ համաշխարհային մակարդակում:

Վրաստանի Իվանե Ջավախիշվիլիի անվան պատմության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Գեորգի Ճեիշվիլին շեշտեց աշխատաժողովի թեմաների արդիականությունը դրանց գիտական և քաղաքական նշանակության տեսանկյունից:

Գիտական զեկուցումներով հանդես եկան առաջատար մասնագետներ Հայաստանից, Վրաստանից և Լեհաստանից՝ ներկայացնելով պետականության զարգացումը Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. 2-րդ հազարամյակում (Հայասայի օրինակով), Իսլամական վերնախավերով պետական կազմավորումները Հայաստանի տարածքում, էթնոքաղաքական գործընթացներն Աղվանքում, ինքնությունների արդիականացումը ծայրամասային կապիտալիզմի ազդեցության ներքո, Վրաստանի պետական քաղաքականությունն Աջարիայի մուսուլմանների նկատմամբ, հակաբազմակարծությունը՝ որպես քաղաքական մշակույթի առանձնահատկություն հետխորհրդային շրջանում և այլ թեմաներով:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Մորգենթաուից մինչև... Մենենդես

Այս տարի՝ ապրիլի 26-ին, լրանում է ամերիկացի նշանավոր դիվանագետ, 1913-1916 թթ. Թուրքիայում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի ծննդյան 170-ամյակը, ով իր անշահախնդիր հայանպաստ գործունեությամբ արժանի տեղ է զբաղեցնում բոլոր ժամանակների մեծ հայասերների պանթեոնում:

Պատմական հիշողությունը զորեղ բան է: 20-րդ դարի երկու ցեղասպանությունների՝ հայոց Մեծ եղեռնի և հրեական Հոլոքոստի կազմակերպիչները՝ երիտթուրքերի և նացիստների պարագլուխները, իրենց ոճիրներն իրագործելիս մշտապես վախ ու տագնապ են ունեցել պատմության դատաստանից և սերունդների վրեժխնդրությունից:

Հայոց ցեղասպանության դեպքում Նյուրնբերգյան դատավարության պես մի ամփոփ ու վերջնական գործընթաց դեռևս տեղի չի ունեցել՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով: Երիտթուրքական հանցագործները կարողացան խույս տալ Կ. Պոլսում դեռևս 1919 թվականին կայացած ու հենց թուրքական ատյանի ընդունած վճիռներից, որոնցով հեռակա նրանց համար գնդակահարություն էր սահմանված: Սակայն պատմության դատաստանից նրանց խուսափել չհաջողվեց:

Չեռնամուխ լինելով հայ ժողովրդի բնաջնջմանը՝ երիտթուրքական կառավարությունը փորձում էր ամեն ինչ թաքցնել, որպեսզի աշխարհում ոչ ոք իրազեկ չլինի այդ գազանային ոճիրների մասին, և ինքն էլ պատասխանատվություն չկրի: Սակայն հենց պատերազմի սկզբնական շրջանում էլ հայության դաժան բռնագաղթի և կոտորածների լուրերը տարածվեցին աշխարհով մեկ:

Արդեն 1915 թ. մայիսի 24-ին Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակցային կառավարությունները պաշտոնապես բողոքի նոտա հղեցին Թուրքիային՝ հայության դեմ կատարվող ոճիրները որակելով որպես համայն մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություններ: Նրանք այդ ոճրագործությունների համար անձնապես պատասխանատու համարեցին թուրքական գործող կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև նրա տեղական այն ներկայացուցիչներին, որոնք մասնակից էին ջարդերին ու կոտորածներին:

1915 թվականի դժնդակ օրերին մեծ տերությունների դիվանագիտական ներկայացուցիչներից իրեն խորապես մարդկային և արժանապատիվ դրսևորեց Թուրքիայում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն: Դեսպանը հստակ տեղեկացված էր և գիտակցում էր, թե ինչպիսի բարբարոսություններ էին կատարվում արևմտահայկական նահանգներում: Իսկ այն, ինչ տեսել, հասկացել ու զգացել էր Մորգենթաուն, իսկապես ահավոր էր: Նա համոզված էր, որ թուրքական իշխանությունների իսկական նպատակն էր բնաջնջել Օսմանյան կայսրության տարածքում ապրող բոլոր հայերին: Նա այն սակավաթիվ բացառիկ անհատներից էր, որ ազնվորեն բնութագրեց տեղի ունեցածը. «Համոզված եմ, որ մարդկության ողջ պատմության մեջ չկան այնքան զարհուրելի փաստեր, ինչքան այս կոտորածը: Անցյալում կատարված մեծ ջարդերն ու հալածանքները գրեթե աննշան են թվում 1915 թ. հայ ազգի կրած տառապանքների համեմատ... Մեր ժողովուրդը երբեք չի մոռանա այս ջարդերը», - գրում էր Հենրի Մորգենթաուն:



Այո՛, ԱՄՆ դեսպանը միանգամայն իրավացի էր: Մի ամբողջ ժողովրդի բնաջնջման իրական սպառնալիք եղավ 1915 թվականին և ավարտվեց հայ ազգի մեծագույն մասի ոչնչացումով ու նրա պապենական բնօրրանի բռնազավթումով:

Մորգենթաուն ոչ միայն խիղճը չկորցրած դիվանագետ էր, այլև մարդկային, բարոյական բարձր որակներ կրող անհատ: Թեև պայթել էր համաշխարհային պատերազմը, և իր երկիրն այդ պատերազմում որդեգրել էր չեզոքություն, այնուամենայնիվ նա չէր կարող անտարբեր, կրավորական վերաբերմունք ցուցաբերել կատարվող ողբերգության հանդեպ: Երիտթուրքական իշխանությունների վրա ազդելու և հայոց կոտորածները դադարեցնելու առաքելությամբ դեսպան Մորգենթաուն շատ հաճախ գերազանցում էր իր պաշտոնական դիրքն ու լիազորությունները:

Ի վերջո, Մորգենթաուն չդիմացավ այդ ամենին, և նրա հոգեկան աշխարհն ու նյարդային համակարգը տեղի տվեցին: Զգալով իր անզորությունը տեղի ունեցող ողբերգության հանդեպ՝ Մորգենթաուն 1916 թ. գարնանը հրաժարվեց դեսպանի պաշտոնից և վերադարձավ ԱՄՆ: Այս առիթով նա գրել է. «Ես մարդ էի, այլ կերպ չէի կարող... Ես այլևս չէի կարող շարունակել իմ հարաբերություններն այնպիսի մարդկանց հետ, որոնք թեպետ սիրալիր և բարեկիրթ են, բայց կարող են մեկ միլիոն մարդու արյուն հեղել»:

Հաջորդ տարիներին նա հրատարակեց մի շարք արժեքավոր գործեր. «Հայկական ջարդերի առթիվ» (1918 թ.), «Հայաստանը կանչում է» (1918 թ.), «Ինչո՞ւ պետք է կործանել Օսմանյան կայսրությունը» (1918 թ.), «Կոչնչանա՞ արդյոք Հայաստանը» (1920 թ.), «Հայերի կոտորածները 1915-ին», «Բոսֆորի գաղտնիքները. 1913-1916» (1918 թ.), «Հայաստանի ողբերգությունը» (1918 թ.), «Դեսպան Մորգենթաուի հուշերը» (1919 թ.), որոնցում հույժ կարևոր ու վավերականորեն հավաստի տեղեկություններ էր հաղորդում հայոց Մեծ եղեռնի վերաբերյալ: Որպես մարդ, քաղաքացի և անհատ՝ Մորգենթաուն իր բովանդակ գործունեությամբ կատարեց ու մարեց իր պարտքը մարդկության և մարդկայնության հանդեպ:

Նրա արածը, ի վերջո, ոչ թե միայն հայ ժողովրդի, այլև առհասարակ՝ մարդու և մարդկայինի պաշտպանությանն ու պահպանությանն էր ուղղված: Մորգենթաուի մարդկային–քաղաքացիական սխրանքը լուսեղեն երանգներով մնաց երախտապարտ հայության և մարդկության առաջադեմ ու լավագույն մասի հիշողության առանցքում:

Նրա անունը հավերժացված է Ծիծեռնակաբերդի՝ Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրի հիշատակի պատին: Ամեն տարի՝ ապրիլի 24-ին, դեպի Ծիծեռնակաբերդի բարձունքը շարժվող հարյուր հազարավոր մարդկանց հոսքը հոգեպես խոնարհվում է նաև մեծանուն մարդասերի՝ Հենրի Մորգենթաուի անվան և հիշատակի առջև:

Մորգենթաուի գործը, նրա ձևավորած մարդասիրական ավանդույթները շարունակվում են մեր օրերում ևս և շարունակվելու են միշտ՝ մարդկության բարեպաշտ ու առաքինի զավակների կողմից: Թուրքական ստի ու կեղծարարության արշավը վերջապես կանխվեց նաև ամերիկյան բարձրագույն օրենսդիր մարմիններում: Սկզբում ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատը միաձայն քվեարկեց հայոց ցեղասպանության իրողությունը ճանաչող բանաձևի օգտին, որից հետո այն ընդգրկվեց Սենատի օրակարգ: Այդ բանը թույլ չտալու համար Վաշինգտոն աճապարեց Թուրքիայի արկածախնդիր նախագահը՝ Էրդողանը: Սակայն այս անգամ ապարդյուն էին թուրքական իշխանությունների ջանքերը: Ամերիկյան Սենատում արդարադատ մարդկանց ներկայությունը զգաստացնող ապտակ էր թուրքական կաշառատու քարոզչամեքենային: Մարդկության և մարդկայնության մեծ ու անկաշառ զավակի՝ Մորգենթաուի գործի արժանավոր ժառանգորդն ու հետևորդը եղավ ազդեցիկ սենատոր ու հանրային գործիչ Մենենդեսը, որն իր համախոհներով ամեն ջանք թափեց՝ թուրքական մեքենայությունները կասեցնելու և հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևը ամերիկյան օրենսդիր բարձրագույն ատյանում ընդունելու համար:



Մենենդեսի և նրան համախոհ սենատորների ջանքերով 2019 թ. դեկտեմբերի 12-ը պատմական արժանահիշատակ օր դարձավ: Աշխարհի գերտերություններից մեկի՝ Միացյալ Նահանգների Սենատը մոտ մեկ դար անց հաստատեց ու վերահաստատեց պատմական անուրանալի ճշմարտությունը: Այն ճշմարտությունը, որի մասին ի լուր աշխարհի բարձրաձայն աղաղակել էր դեսպան Մորգենթաուն: Իսկ դեսպանը որևէ շահ չուներ, երբ հնարավոր բոլոր միջոցներով փորձում էր սատար կանգնել բնաջնջվող հայությանը:

Նրա միակ շահը… մարդկայնությունն ու մարդասիրությունն էր: Պատմական արդարադատության վերահաստատման սկզբունքով են առաջնորդվել այն անհատներն ու միջազգային հաստատությունները, ի վերջո պետությունները, որոնք, բախման մեջ մտնելով ցեղասպան երկրի հետ, բարձրաձայնել, օրենքների և բանաձևումների տեսքով և ուժով դատապարտել են 20-րդ դարի առաջին զանգվածային ոճրագործությունը:

1915 թ. զարհուրելի իրադարձություններով անցած Հենրի Մորգենթաուից մինչև 21-րդ դարի երկրորդ տասնամյակը ամերիկյան արդարադատությունը չկորավ ու չմեռավ, մնաց կանգուն ցեղասպանների գործադրած բոլոր ճնշումներին հակառակ:

Ամերիկյան Սենատի ընդունած վճիռը նախևառաջ հարգանքի տուրք է ոչ միայն ցեղասպանության զոհերի անմարելի և սրբալույս հիշատակին, այլև Մորգենթաուի նման անհատների անվանն ու կատարած սխրանքին, անհատներ, որոնք դժվարին հանգամանքներում բարձր պահեցին համայն մարդկության պատիվը:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

Թուրքիայում 116 տարի անց վերահրատարակվել է Գրիգոր Զոհրապի աշխատությունը

Արևմտահայ նշանավոր գրող, իրավաբան և քաղաքական գործիչ Գրիգոր Զոհրապի՝ 1909 թվականին հրատարակված «Hukuk-i Ceza» («Քրեական իրավունք») աշխատությունը 116 տարի անց վերահրատարակվել է: Գիրքը համարվում է օսմանյան-թուրքական քրեական իրավունքի հիմնարար աշխատություններից մեկը: Այս մասին տեղեկացնում է ermenihaber.am-ը:

Զոհրապը (1861-1915) Երկրորդ սահմանադրական շրջանից հետո դասավանդել է Ստամբուլի իրավաբանական ֆակուլտետում և միաժամանակ եղել է Օսմանյան խորհրդարանի պատգամավոր: Նրա դասախոսությունների հիման վրա կազմված աշխատությունը ոչ միայն ուսումնական ձեռնարկ է, այլև կարևոր աղբյուր՝ ժամանակակից թուրքական քրեական իրավունքի ձևավորման գործընթացը հասկանալու համար:

Զոհրապը դեռևս 1891 թվականին հանդես էր գալիս պաշտպանական իրավունքի ամրապնդման օգտին՝ շեշտելով, որ մեղադրյալը չպետք է դատվի առանց փաստաբանի, իսկ նման հնարավորություն չունեցողներին պետությունը պետք է տրամադրի անվճար պաշտպան: Նա նաև զգուշացնում էր, որ դատավորների վերահսկողությունից դուրս գործող լիազորությունները կարող են վտանգել արդար դատաքննությունը:



1906 թվականին սուլթան Աբդուլ Համիդ II-ի օրոք Զոհրապին արգելվել է զբաղվել փաստաբանական գործունեությամբ, ինչից հետո նա մեկնել է Փարիզ: 1908 թվականի սահմանադրության վերականգնումից հետո վերադարձել է Ստամբուլ և վերսկսել դասավանդումը: 1909-ին նրա դասախոսությունները հրատարակվել են որպես 281-էջանոց աշխատություն՝ բաղկացած վեց հիմնական բաժիններից:

Գիրքը 2025 թվականին հրատարակության է պատրաստել թուրք փաստաբան Թուղայ Այդընը. լույս է տեսել «On İki Levha Yayıncılık» հրատարակչության կողմից՝ ակադեմիական շրջանակների մասնակցությամբ: Գրքի անոտացիայում ընդգծվում է, որ «Hukuk-i Ceza»-ն ժամանակակից թուրքական քրեական իրավունքի ձևավորման հիմնարար տեքստերից է:

Վերահրատարակությամբ Զոհրապի իրավագիտական ժառանգությունը կրկին հասանելի է դարձել հետազոտողների և իրավաբանների համար՝ նոր քննարկումների հնարավորություն բացելով թե՛ իրավունքի, թե՛ մտավոր պատմության ոլորտներում:

168.am,18.02.2026

Քաղաք Լուսնի վրա. ինչո՞ւ է SpaceX-ը Մարսից վերակողմնորոշվում դեպի Երկրի արբանյակ

Իլոն Մասկը միշտ Մարսն է համարել առաջնահերթություն: SpaceX-ի հիմնադիրը բազմիցս ընդգծել է, որ ընկերությունը ստեղծվել է 2002 թվականին հենց Կարմիր մոլորակի գաղութացման համար: SpaceX-ի կայքում Մարսը նշված է որպես մարդկային էքսպանսիայի և հետազոտությունների առաջնային օբյեկտ: Միևնույն ժամանակ Մասկը հաճախ էր անտեսում Լուսինը՝ այն անվանելով «շեղող գործոն»: Ընդամենը 13 ամիս առաջ նա հայտարարում էր, որ SpaceX-ը կգնա «ուղիղ դեպի Մարս»: Սակայն վերջերս Մասկը զարմացրեց բոլորին՝ հայտարարելով շեշտադրումների ժամանակավոր տեղաշարժի մասին դեպի Լուսին: Այժմ ընկերության համար առաջնային է Լուսնի վրա ինքնաբավ քաղաքի կառուցումը առաջիկա տարիներին:

Փոփոխության մասին հայտարարությունը՝ Մարսից դեպի Լուսին

Մասկն իր X (նախկին Twitter) սոցիալական ցանցում գրել է. «Նրանց համար, ովքեր տեղյակ չեն. SpaceX-ն արդեն վերակողմնորոշվել է դեպի Լուսնի վրա ինքնաբավ քաղաքի կառուցումը, քանի որ մենք պոտենցիալ կարող ենք դրան հասնել 10 տարուց քիչ ժամանակում, մինչդեռ Մարսը կպահանջի 20+ տարի»: Նա հավելել է. «SpaceX-ի առաքելությունը մնում է անփոփոխ՝ ընդլայնել գիտակցությունը և մեզ հայտնի կյանքը դեպի աստղերը»: Մասկը Լուսնի ընտրությունը բացատրել է գործնական նկատառումներով. թռիչքները դեպի Մարս հնարավոր են միայն 26 ամիսը մեկ, երբ մոլորակները դասավորվում են համապատասխան ձևով (ճանապարհորդությունը տևում է վեց ամիս), մինչդեռ դեպի Լուսին կարելի է թռչել յուրաքանչյուր 10 օրը մեկ (թռիչքը տևում է ընդամենը երկու օր): Սա թույլ է տալիս նախագիծը զարգացնել շատ ավելի արագ:

Առաջնահերթությունների փոփոխության ակնարկներ

Այս տեղաշարժի մասին ակնարկներ Մասկն արել էր նաև Երկրի ուղեծրում տվյալների կենտրոնների համար նախատեսված մեկ միլիոն արբանյակներից բաղկացած համաստեղության գործարկման SpaceX-ի պլանների մասին մանրամասն զեկույցում: Մասկն ընդգծել էր Starship-ի լուսնային պոտենցիալը. «Այնպիսի ձեռքբերումների շնորհիվ, ինչպիսին է տիեզերքում վառելիքի լիցքավորումը, Starship-ը կկարողանա հսկայական ծավալի բեռներ հասցնել Լուսին»: Նա հավելել էր. «Այնտեղ հնարավոր կլինի ստեղծել մշտական ներկայություն գիտական և արտադրական նպատակներով: Լուսնի վրա գտնվող գործարանները կկարողանան օգտագործել լուսնային ռեսուրսները՝ արբանյակների արտադրության և դրանք դեպի տիեզերք արձակելու համար: Էլեկտրամագնիսական արագացուցչի և լուսնային արտադրության օգնությամբ հնարավոր է խոր տիեզերքում տեղակայել տարեկան 500–1000 տերավատտ հզորությամբ ԱԲ արբանյակներ, էապես բարձրանալ Կարդաշյովի սանդղակով և օգտագործել Արեգակի էներգիայի զգալի մասը» (Կարդաշյովի սանդղակը, որն առաջարկվել է խորհրդային գիտնականի կողմից 1964 թվականին, դասակարգում է քաղաքակրթությունները՝ ըստ էներգիայի վերահսկման մակարդակի. I տիպ՝ մոլորակի ողջ էներգիան, II տիպ՝ աստղի, III տիպ՝

գալակտիկայի: Մարդկությունը դեռևս չի հասնում նույնիսկ I տիպին):

«Բոնուսային տա՞ր», թե՞ հիմնական պատճառ

Մասկը հստակեցրել է, որ տիեզերական տվյալների կենտրոնների հարցը նոր ռազմավարության ընդամենը «բոնուսային տարրն է»: Փոփոխության գլխավոր պատճառը աղետի վախն է: «Առաջնահերթության փոփոխությունը տեղի ունեցավ, որովհետև ես անհանգստացած եմ, որ բնական կամ տեխնածին աղետը կընդհատի մատակարարումները Երկրից, և գաղութը կկործանվի»,- գրել է նա: «Մենք կարող ենք լուսնային քաղաքը դարձնել ինքնաբավ 10 տարուց քիչ ժամանակում, բայց Մարսը կպահանջի 20+ տարի՝ 26-ամսյա ցիկլի պատճառով: Ահա թե ինչն է առաջնային»: SpaceX-ը լիովին չի հրաժարվում Մարսից: Վերջին հրապարակումներում Մասկն ընդգծել է, որ Կարմիր մոլորակը մնում է պլաններում, բայց որոշակի ուշացումով. «Մարսը կմեկնարկի 5-6 տարուց, այնպես որ կզարգանա Լուսնին զուգահեռ, բայց Լուսինը կդառնա սկզբնական կենտրոնը»: Մեկ այլ հաղորդագրության մեջ նա նշել է 2031 թվականին դեպի Մարս մարդու հնարավոր թռիչքի մասին:

Լուսնային պլաններ. Artemis-ից դեպի իրականություն

Թեև Լուսնի գաղութացման վրա կենտրոնանալը նորույթ է, SpaceX-ն արդեն հինգ տարի է, ինչ աշխատում է լուսնային առաքելությունների վրա: 2021 թվականի ապրիլին NASA-ն ընտրեց Starship-ը՝ որպես Artemis ծրագրի առաջին մարդատար լուսնային վայրէջքային մոդուլ, որի նպատակն է մինչև 2030 թվականը մարդու մշտական ներկայությունն ապահովել Լուսնի վրա: Եթե ամեն ինչ ընթանա ըստ պլանի, Starship-ը տիեզերագնացներին կհասցնի Լուսնի մակերևույթ Artemis 3-ի շրջանակներում, որը նախատեսված է 2028 թվականին: Սակայն դա կախված է Artemis 2-ի հաջողությունից (չորսհոգանոց անձնակազմով թռիչքը Լուսնի շուրջը հնարավոր է արդեն հաջորդ ամիս): Starship-ը դեռ պետք է ապացուցի իր պատրաստվածությունը: Այս պահին հրթիռն իրականացրել է 11 ենթաուղեծրային փորձնական թռիչք, սակայն ուղեծրային թռիչք դեռ չի եղել: Անհրաժեշտ են տիեզերքում վառելիքի լիցքավորման ցուցադրություն (յուրաքանչյուր լուսնային առաքելություն կպահանջի 10-12 «լիցքավորող» արձակում) և այլ առանցքային փուլեր: Անցյալ տարվա աշնանը NASA-ի ղեկավարի նախկին պաշտոնակատար Շոն Դաֆին մտահոգություն էր հայտնել Starship-ի մշակման տեմպերի վերաբերյալ և առաջարկել էր պայմանագիրը բացել այլ ընկերությունների համար մրցակցության նպատակով, ինչպիսին է Ջեֆ Բեզոսի Blue Origin-ը: Այժմ NASA-ն գլխավորում է միլիարդատեր Ջարեդ Այզեկմանը (ով երկու անգամ թռել է ուղեծիր SpaceX-ի հետ), բայց մրցակցությունն առկա է. Blue Origin-ը վերջերս երկու տարով դադարեցրել է ենթաուղեծրային տուրիզմը՝ Լուսնի վրա կենտրոնանալու համար:

Կարճ ասած

SpaceX-ը ժամանակավորապես վերակողմնորոշվել է դեպի Լուսնի վրա ինքնաբավ քաղաքի ստեղծումը. նախագիծը կարելի է իրականացնել 10 տարում՝ ի տարբերություն Մարսի (20+ տարի): Պատճառները՝ արագ զարգացումը (թռիչքներ յուրաքանչյուր 10 օրը մեկ՝ 26 ամսվա փոխարեն), Երկրի վրա հնարավոր աղետի մտավախությունը և «բոնուսը»՝ ԱԲ արբանյակների համար լուսնային գործարանների տեսքով: Մարսը չի լքվել. մեկնարկը 5-6 տարուց է, մարդու թռիչքը՝ 2031-ին: Starship-ը առանցքային տարր է, բայց առջևում դեռ փորձարկումներ են: Սա լրացնում է NASA-ի Artemis ծրագիրը, որտեղ Starship-ը լուսնային վայրէջքային սարքն է 2028 թվականի համար:

NEWS.am, 13.02.2026

ԳԻՏԱՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՀԱՆԴԵՍ
ԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Հետաքրքիր տեղեկություններ երկրագնդի բնակչության մասին*

* Ներկայում Երկրի բնակչությունը շուրջ 8.3 միլիարդ է: Բնակչության 11%-ն ապրում է Եվրոպայում, 5%-ը՝ Հյուսիսային Ամերիկայում, 9%-ը՝ Հարավային Ամերիկայում, 15%-ը՝ Աֆրիկայում, 60%-ը՝ Ասիայում: Բնակչության 49 %-ն ապրում է գյուղերում, 51%-ը՝ քաղաքներում:

* Երկրի բնակչության 12%-ը խոսում է չինարեն, 5%-ը՝ իսպաներեն, 5%-ը՝ անգլերեն, 3%-ը՝ արաբերեն, 3%-ը՝ հինդի լեզվով, 3%-ը՝ բենգալերեն, 3%-ը՝ պորտուգալերեն, 2%-ը՝ ռուսերեն, 2%-ը՝ ճապոներեն, 62%-ը՝ իր լեզվով:

* Երկրի բնակչության 77%-ն ունի բնակարան, 23%-ը չունի ապրելու տեղ:

* Մարդկանց 21%-ն ուտում է չափից ավելի, 63%-ը կարող է ուտել, որքան ցանկանում է, 15%-ը թերասնվում է, բնակչության 48%-ի կյանքի օրական արժեքը ԱՄՆ 2 դոլարից քիչ է:

* Մարդկանց 87%-ն ունի մաքուր խմելու ջուր, 13 %-ը կա՛մ չունի մաքուր խմելու ջուր, կա՛մ նրան հասանելի է ջրի աղտոտված աղբյուր:

* Բնակչության 75%-ն ունի շարժական հեռախոս, 25 %-ը չունի, 30 %-ին հասանելի է համացանցը, 70%-ը չունի համացանցին միանալու պայմաններ:

* Բնակչության 7%-ն ունի բարձրագույն կրթություն, 93%-ը չի սովորել քոլեջում կամ բուհում, 83%-ը կարող է կարդալ, 17 %-ն անգրագետ է:

* Երկրագնդի բնակչության 33%-ը քրիստոնյա է, 22%-ը՝ մահմեդական, 14%-ը՝ հինդուիզմի հետևորդ, 7%-ը՝ բուդդայական, 12%-ը՝ այլ կրոնների հետևորդ, 12%-ը չունի կրոնական համոզմունքներ:

* Բնակչության 26%-ն ապրում է 14 տարուց քիչ, 66%-ը մահանում է 15-ից մինչև 64 տարեկան հասակում, 8%-ն ապրում է 65 տարուց ավելի:

Եթե դուք ունեք բնակարան, լիարժեք սնունդ, խմում եք մաքուր ջուր, ունեք շարժական հեռախոս, կարող եք ճանապարհորդել համացանցում և ավարտել եք քոլեջ կամ բուհ, ապա դուք փոքրիկ արտոնյալ խմբում եք (7%-ից պակաս):

Բոլոր մարդկանց միայն 8%-ն է ապրում մինչև 65 տարի:

Եթե դուք 65 և ավելի տարեկան եք, ապա եղե՛ք գոհ և երախտապարտ: Խնայե՛ք կյանքը, որսացե՛ք պահերը: Եթե դուք չեք հեռացել այս աշխարհից մինչև 65 տարեկան դառնալը, ինչպես մարդկանց 92%-ը, որոնք ձեզնից առաջ հեռացել են, դուք արդեն օրհնյալ մարդ եք: Հո՛գ տարեք սեփական առողջության մասին: Գնահատե՛ք մնացած յուրաքանչյուր պահը:

ԱՄՆ-ում կատարված լայնածավալ հետազոտությունները ցույց են տվել, որ

* մարդու ամենաարդյունավետ տարիքը 60-ից մինչև 70 տարեկանն է.

* երկրորդ ավելի արդյունավետ շրջանը 70-ից 80 տարին է.

* երրորդ արդյունավետ շրջանը 50-ից 60 տարին է. մինչ այդ մարդը դեռ չի հասնում իր ունակությունների առավելագույնին:

* Նոբելյան դափնեկիրների միջին տարիքը 62 տարի է,

* աշխարհի 100 խոշորագույն ընկերությունների նախագահների միջին տարիքը 63 տարի է,

* Հռոմի պապերի միջին տարիքը 76 տարի է:

Բերված տվյալները վկայում են, որ մարդու կյանքի լավագույնն ու ամենաարդյունավետը 60-ից մինչև 80 տարիներն են:

60 տարեկանում դուք հասնում եք ձեր հուզական և մտավոր ներուժի բարձրակետին, և դա շարունակվում է մինչև 80 տարեկան դառնալը:

Հետևաբար, եթե դուք 60, 70 կամ 80 տարեկան եք, ապա ձեր կյանքի լավագույն մակարդակում եք:

Տվյալները վերցված են «New England Journal of Medicine» ամսագրից

* «Գիտության աշխարհում», N 1, 2026 թ.

Եգիպտոսում հայտնաբերվել է երկրորդ սֆինքսը

Իտալացի հնագետները, կիրառելով արբանյակային ժամանակակից միջոցներ, Գիզայի սարահարթում հայտնաբերել են Հին աշխարհի ամենահայտնի հուշարձանի՝ մեծ սֆինքսի հավանական «երկվորյակին»: Ըստ գիտնականների՝ ավազի հաստ շերտի տակ թաքնված այս պատմական արժեքն ունի ավելի քան 3000 տարվա պատմություն:

Հետազոտության հիմքում ընկած է մեծ սֆինքսի թաթերի արանքում գտնվող հնագույն հուշասալի վրա առկա պատկերը, որտեղ նկարված է երկու սֆինքս: Հնագետ Ֆիլիպո Բիոնդին նշում է, որ բուրգերից դեպի սֆինքս տանող ուղղահայաց գծերը մատնանշում են երկրորդ հուշարձանի «հայելային» տեղակայումը: Արբանյակային զննման շնորհիվ 55-մետրանոց ավազաբլրի տակ հայտնաբերվել է հսկայական կառույց, որը կրկնում է հայտնի պատկերի ձևերը:

Նախնական տվյալները փաստում են նաև ուղղահայաց հորանների և ստորգետնյա անցուղիների գոյության մասին, որոնք զարմանալիորեն նման են մեծ սֆինքսի տակ արդեն իսկ հայտնաբերված լաբիրինթոսներին: Սա թույլ է տալիս ենթադրել, որ Գիզայի սարահարթի տակ կա ստորգետնյա հսկայական համալիր, իսկ երկու սֆինքսների պատկերները ոչ թե խորհրդանշական են եղել, այլ հուշել են տարածքի իրական նախագծի մասին:

Հնագետները նախապատրաստվում են պեղումների մեկնարկին՝ հետևելով ստորգետնյա անցուղիների հետագծին: Եթե վարկածը հաստատվի, ապա սա կլինի վերջին տասնամյակների հնագիտական ամենախոշոր բացահայտումը, որը կփոխի մեր պատկերացումները հին եգիպտական քաղաքակրթության մասին:

KarevorNews, 6.04.2026

Գիրք

Գլխավոր խմբագիր՝ Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Խմբագիր՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
էլ. հասցեն՝ armine.pet21@mail.ru
Ստորագրված է տպագրության՝ 30.04.2026 թ.: Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: